ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՋԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

(ԸՍՏ 2015թ. ԵՎ 2019թ. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ)

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն–Հայաստան

Երևան, հունվար 2020թ.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

(ԸՍՏ 2015թ. ԵՎ 2019թ. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ)

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան

Երևան, հունվար 2020թ.

Սույն զեկույցը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների և հասկացությունների ցանկ 5

Ներածություն 6

«ՀաՄաՏեղ» ծրագրի հարցման մեթոդաբանություն 8

Մաս I. Հանրային իրազեկվածություն տեղական ինքնակառավարման վերաբերյալ, հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը և հանրային գոհունակություն ՏԻՄ աշխատանքներից 10

Ամփոփագիր 11

Հանրային իրազեկվածություն տեղական ինքնակառավարման վերաբերյալ 12

Ավագանու անդամներ. արդյո՞ք ճանաչում են նրանց 12

Համայնքի բյուջե. ի՞նչ գիտեն բնակիչները դրա մասին 13

Օրենսդրության իմացություն. ավագանու անդամի լիազորությունների կասեցում 14

Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը 16

Խնդիրների բարձրաձայնում ՏԻՄ-երի առջև 16

Մասնակցություն ՏԻՄ-երի աշխատանքներին 17

Հանրային գոհունակությունը ՏԻՄ-երից 19

Գոհունակություն ՏԻՄ-երի աշխատանքից 19

Վստահություն ՏԻՄ-երի հանդեպ 24

ՏԻՄ-երի կողմից որոշումների կայացման ներառականություն 27

Մաս II. «ՀաՄաՏեղ» ծրագրի դրամաշնորհառուների հետազոտություններ 30

Նարեկ Կարապետյան. Որքանո՞վ են արտաքին գործոնները (խոշորացում, բյուջե, սոցիալ-տնտեսական վիճակ) կարևոր ՏԻՄ-երի գործունեության հանրային ընկալումների համար 31

Գրականություն և հետազոտության խնդրի ձևակերպում 31

Մեթոդի նկարագրություն 32

Արդյունքներ 33

Ամփոփում և առաջարկություններ 33

Արման Գասպարյան. Հանրային բավարարվածությունը տեղական ժողովրդավարությունից և համայնքային ծառայություններից Հայաստանի համայնքներում խոշորացման համատեքստում. 2015 և 2019 թթ. 35

Հետազոտվող խնդրի նկարագրություն 35

Գրականության տեսություն 35
Մեթոդ. տվյալադարան, փոփոխականներ, վիճակագրական թեսթեր 36
Արդյունքներ 37
Համառոտ ամփոփում 39
Առաջարկներ որոշում կայացնողների համար 40
Օգտագործված գրականության ցանկ 41
Սոնյա Մսրյան. Իրազեկվածություն ՏԻՄ-երի վերաբերյալ և մասնակցություն տեղական ինքնակառավարմանը. վստահությունը որպես միջանկյալ գործոն 42
Ներածություն 42
Նպատակ եվ հիպոթեզներ 43
ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածության եվ ՏԻ-անը մասնակցության չափումը 43
Կլաստերային վերլուծության սխեման 45
Կլաստերային վերլուծություն, 2015 թ. 46
Կլաստերային վերլուծություն, 2019 թ. 47
ՏԻ-ան վերաբերյալ իրազեկվածության աճը չի հանգեցրել մասնակցության աճի 48
Վստահությունը որպես միջանկյալ փոփոխական 48
Առաջարկություններ 50
Զարուհի Սիմոնյան. ՏԻՄ-երի 2015-2019. խնդիրներ, ձեռքբերումներ և արժեքային փոփոխություններ 54
Հետազոտական հարցեր 54
Մեթոդ 54
Արագ արձագանքում ըստ մարզերի. 2015-2019 թթ. 55
Թափանցիկություն ըստ մարզերի և Երևան համայնքի. 2015-2019 թթ. 57
ՏԻՄ-երի հետ խնդիրների լուծման միջոցները 58
Մարզերի իմիջի վերլուծություն 59
Հետհեղափոխական փոփոխություններ 61
Վստահության թիրախային խմբերի սահմանում 64
Հավելված. «ՀաՄաՏեղ» ծրագրի 2019թ. համապետական հարցման հարցաթերթ 69

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀամԱՏեղ	«Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագիր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
Խոշորացված համայնք	Խոշորացված/միավորված համայնքը ՀՀ վարչատարածքային բերփոխումների արդյուքնում մի քանի բնակավայրերի համախմբումն է մեկ համայնքի մեջ՝ հնարավորինս արդյունավետ կառավարման նպատակով:
Վիճակագրական նշանակալիություն	Վիճակագրությունում փոփոխականի արժեքը (նշանակությունը) վիճակագրորեն նշանակալի է, եթե տվյալ արժեքի կամ առավել ծայրահեղ արժեքների պատահական ի հայտ գալու հավանականությունը փոքր է: Որպես ծայրահեղ արժեք նկատի է առնված վիճակագրական թեստի արդյունքում ստացված արժեքի շեղումը զրոյական հիպոթեզից:
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
Տ/Տ	Տնային տնտեսություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ներկայացված են «ՀաՄաՏեղ» ծրագրի շրջանակներում 2015 և 2019 թվականներին Հայաստանում անցկացված համապետական երկու հարցումների տվյալները: Դրանք վերաբերում են տեղական ինքնակառավարման մասին հանրային իրազեկվածությանը, տեղական ինքնակառավարման գործընթացներում հանրային մասնակցությանը, ինչպես նաև հանրային գոհունակությանը տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքից: Հարցման տվյալները զեկույցի առաջին մասում ներկայացված են համեմատական կարգով: Նախ ներկայացվում է 2015 և 2019 թվականների տվյալների համեմատությունը, ապա՝ համեմատությունը խոշորացված և չխոշորացված համայնքների միջև 2019 թվականին:

Զեկույցի երկրորդ մասը ներկայացնում է ՀՌԿԿ-Հայաստանի 2019 թվականի «ՀաՄաՏեղ» հետազոտական դրամաշնորհի չորս մասնակիցների (Նարեկ Կարապետյան, Արման Գասպարյան, Սոնա Մսրյան և Զարուհի Սիմոնյան) աշխատանքների արդյունքները՝ համառոտ: Այս աշխատանքներում դրամաշնորհառուները փորձել են հասկանալ, թե ինչ գործոններ են նպաստում Հայաստանում մասնակցային տեղական ինքնակառավարման զարգացմանը: Դրամաշնորհառուների աշխատանքները նաև առաջարկություններ են պարունակում քաղաքականություն մշակողների և իրագործողների համար:

Հարկ է նշել, որ զեկույցում ներկայացված տվյալները անհրաժեշտ է դիտարկել 2015-2019 թվականների ընթացքում Հայաստանում տեղի ունեցած մի շարք հասարակական-քաղաքական զարգացումների լույսի ներքո, որոնք կարող էին ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել բնակչության շրջանում կարծիքների ձևավորման վրա: Այդ զարգացումներից նշենք հետևյալները՝

ՀաՄաՏեղ ծրագրի իրականացման հինգ տարիների ընթացքում, մասնավորապես՝ 2018թ.-ի գարնանը, տեղի է ունեցել առանցքային քաղաքական իրադարձություն, որը հայտնի է «Թավշյա հեղափոխություն» անունով: Այդ իրադարձությունը տեղի է ունեցել քաղաքացիական անհնազանդության, ոչ բռնի խաղաղ ցույցերի միջոցով: Կարելի է ենթադրել, որ այդպիսի բեկումնային իրադարձություններն ուղղակիորեն ազդում են քաղաքական իշխանության տարբեր մակարդակների հանդեպ հանրային վստահության ցուցանիշների վրա: Դրանք կարող են իրենց ազդեցությունը թողնել նաև հարցվողների արժեքային, գաղափարախոսական և աշխարհայացքային կողմնորոշումների վրա: Օրինակ՝ քաղաքացիական գիտակցության և քաղաքական մասնակցության մակարդակների աճին զուգընթաց, հասարակությունը կարող է ավելի պահանջկոտ դառնալ իշխանությունների հանդեպ:

2015թ.-ից ի վեր, համայնքների միավորման գործընթացը ոչ միշտ է կազմակերպվել հետևողական եղանակով: Մասնավո-

րապես՝ վերջին փնջի համայնքների խոշորացումը (2017 թվականի հունիս, 325 նախկին համայնքների միավորում 34 նոր բազմաբնակավայր համայնքների մեջ) կազմակերպվել և իրականացվել է հապճեպ և զգալիորեն տարբերվել է նախկին երկու փուլերից (2015 թվականի նոյեմբեր՝ պիլոտային 3 բազմաբնակավայր համայնքների ձևավորում 22 նախկին համայնքների միավորման արդյունքում, 2016թ.-ի հունիս՝ 118 նախկին համայնքների միավորում 15 նոր բազմաբնակավայր համայնքների մեջ):

Խոշորացման վերջին փուլն իրականացվել է առանց տեղական հանրաքվեների և բնակչության իրազեկմանն ուղղված բավարար աշխատանք կատարելու: Համայնքների միավորման այս վերջին փուլը ոչ միանշանակ է ընդունվել նաև փորձագիտական հանրության կողմից:

«ՀԱՄԱՏԵՂ» ԾՐԱԳՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՌԿԿ-Հայաստանը 2015 և 2019 թվականներին հանրապետության ողջ տարածքում անցկացրել է տնային տնտեսությունների (տ/տ) համապատասխանաբար նախնական և ամփոփիչ ընտրանքային հարցումներ: Նախնական հարցումն իրականացվել է 2015 թվականի հունիսի 20-ից հուլիսի 11-ը, իսկ եզրափակիչը՝ 2019թ. փետրվարի 20-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում: Հարցումները եղել են ներկայացուցչական հանրապետության համար, այսինքն՝ արդյունքները տարածելի են Հայաստանի ամբողջ բնակչության վրա:

Ստացված տվյալների համեմատելիությունն ապահովելու համար երկու հարցումներն էլ իրականացվել են նույն մեթոդաբանությամբ: 2019թ. հարցաթերթը (տե՛ս Հավելված), 2015թ. -ի հարցաթերթի համեմատությամբ, ենթարկվել է նվազագույն փոփոխությունների. այստեղ ավելացել է միայն 2018թ. -ին երկրում քաղաքական փոփոխություններին առնչվող հարցախումբ:

Երկու հարցումների համար էլ որպես *ընտրանքի տեսակ* օգտագործվել է բազմաստիճան կլաստերային մեթոդը[1]:

Ստրատիֆիկացումը կատարվել է ըստ մարզերի և բնակավայրի տեսակի՝ համակցված թիրախային համայնքների նպատակային ընտրանքի հետ: Տ/տ-երի պատահական ընտրանքը կատարվել է յուրաքանչյուր կլաստերում (11 տ/տ յուրաքանչյուր կլաստերում): Իսկ հարցվողի ընտրությունը կատարվել է «Քիշի աղյուսակի» մեթոդով՝ տ/տ չափահաս անդամներից:

Ընտրանքի նախնական ծավալը 1500 միավոր է եղել երկու հետազոտությունների համար էլ: Արդյունքում, 2019թ. -ի հետազոտության մեջ ընտրվել է 1408 տ/տ, որոնցից 352-ը՝ Երևանում, 462-ը՝ այլ քաղաքային բնակավայրերում և 594-ը՝ գյուղական բնակավայրերում: 2015 թվականի հետազոտության մեջ ներառվել է 1463 տնային տնտեսություն, որոնցից 386-ը՝ Երևանում, 466-ը՝ այլ քաղաքային բնակավայրերում և 591-ը՝ գյուղական բնակավայրերում:

2019 թվականի հետազոտության համար, որպես *ընտրանքի շրջանակ*, օգտագործվել է 2018թ. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների տեղամասային կենտրոնների ցանկը՝ համակցված պատահական քայլի մեթոդով: Մինչ այդ, 2015 թվականի ուսումնասիրության համար օգտագործվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի էլեկտրականություն սպառողների 2013թ. -ի հասցեացանկը:

Նախնական հարցման ընտրանքը կառուցված է 1100 տ/տ-ի (100 կլաստեր) պատա-

[1] Վիճակագրության մեջ բազմաստիճան կլաստերային ընտրանքը ենթադրում է գլխավոր համախմբության տարանջատում ըստ փուլերի՝ յուրաքանչյուր փուլում ավելի փոքր ենթախմբերի ընտրությամբ:

հական ընտրանքից (ընդհանուր բնակչության բաշխման համամասնությամբ), «ՀաՄաՏեղ» ծրագրում ընդգրկված 35 պիլոտային համայնքներից (ավելացվել են այն համայնքները, որոնք չեն ընդգրկվել պատահական ընտրանքի մեջ), համայնքների խոշորացման ծրագրի 3 պիլոտային համայնքային խմբերից յուրաքանչյուրում առավել փոքր և կենտրոնից առավել հեռու գտնվող համայնքներ (ավելացվել են այն համայնքները, որոնք պատահական ընտրանքում չեն ընդգրկվել):

Եզրափակիչ ուսումնասիրության կառուցվածքը մնացել է նույնը. ավելացել են միայն 10 նոր կլաստեր՝ ծրագրի չորրորդ տարում «ՀաՄաՏեղ» թիրախային համայնքների շարքում ավելացած, որոնք ի սկզբանե չեն եղել պատահական ընտրանքի մեջ:

ՄԱՍ Ի.

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՋԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՏԻՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Արդյո՞ք Հայաստանի Հանրապետության քաղաքացիները վերջին չորս տարիների ընթացքում (2015-2019թթ.) ավելի իրազեկ են դարձել տեղական ինքնակառավարման տարբեր իրողությունների վերաբերյալ: Արդյո՞ք Հայաստանի Հանրապետության քաղաքացիները վերջին չորս տարիների ընթացքում ավելի շատ են մասնակցում տեղական ինքնակառավարմանը: Արդյո՞ք վերջին չորս տարիների ընթացքում բարձրացել է հանրային գնահատականը ՏԻՄ-երի ընդհանուր աշխատանքի, ՏԻՄ-երի մատուցած ծառայությունների և նրանց գործունեության թափանցիկության վերաբերյալ: Վերջապես, արդյո՞ք համայնքների խոշորացումն ազդել է հանրային իրազեկվածության, մասնակցության և ՏԻՄ-երի աշխատանքից հանրային գոհունակության մակարդակի վրա:

Սույն զեկույցը ներկայացնում է «ՀամաՏեղ» ծրագրի շրջանակներում անցկացված երկու համապետական հարցումների (2015թ. և 2019թ.) արդյունքները: Դրանք վկայում են, որ վերջին չորս տարիներին ՀՀ քաղաքացիների տեղեկացվածությունը տեղական ինքնակառավարման հարցերում էապես չի փոխվել՝ մնալով ցածր մակարդակի վրա: Ըստ որում, 2019թ. Չխոշորացված համայնքների բնակիչները ցուցաբերել են իրազեկվածության ավելի բարձր մակարդակ, քան խոշորացված համայնքների բնակիչները:

Վերջին չորս տարիների ընթացքում տեղական ինքնակառավարմանը ՀՀ քաղաքացիների մասնակցության աստիճանը գրեթե չի փոխվել՝ մնալով ցածր մակարդակի վրա:

Ըստ 2019թ. տվյալների, հարցվածների մոտ մեկ հինգերորդն է հարցմանը նախորդած վեց ամիսների ընթացքում դիմել համայնքի ղեկավարին որևէ անձնական կամ համայնքային խնդրով. էլ ավելի փոքր բաժինն է դիմել համայնքի ավագանու անդամներին: Հարցվածների չնչին բաժինն է մասնակցել համայնքային խնդիրներին վերաբերող ՏԻՄ-երի կազմակերպած տարբեր քննարկումներին: Մասնակցության առումով, խոշորացված և չխոշորացված համայնքների միջև տարբերություններ առանձնապես չեն հայտնաբերվել:

Վերջին չորս տարիների ընթացքում, ՀՀ քաղաքացիների գնահատականները ՏԻՄ-երի գործունեության տարբեր ոլորտների հանդեպ էապես չեն փոխվել: Չի փոխվել նաև գոհունակության աստիճանը ՏԻՄ-երի աշխատանքի թափանցիկության մակարդակից: Այնուամենայնիվ, 2015թ.-ի համեմատ, 2019թ.-ին, ընդհանուր առմամբ, նվազել է ՏԻՄ-երի գործունեության տարբեր ոլորտներին ծայրահեղ բացասական գնահատական տվող հարցվածների թիվը: Միևնույն ժամանակ, 2019թ. Հանրային կարծիքի հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների ընկալումներով, չխոշորացված համայնքները շահեկանորեն տարբերվում են խոշորացված համայնքներից: Խոշորացվածների համեմատ, չխոշորացված համայնքների բնակիչներն ավելի բարձր են գնահատում իրենց ՏԻՄ-երի աշխատանքը և գործունեության թափանցիկությունը: Չխոշորացված համայնքների բնակիչները նաև ավելի շատ են վստահում իրենց համայնքների ղեկավարներին և ավագանու անդամներին (նշված բոլոր դեպքերում տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են):

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ավագանու անդամներ. արդյո՞ք ճանաչում են նրանց

Ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 1.1-ը, ընդհանուր առմամբ, չորս տարվա ընթացքում (2015-2019) ավագանու անդամներն ավելի ճանաչելի ***չեն*** դարձել հարցված հայաստանցիների համար: Մասնավորապես, 2019թ.-ին հարցվածների գրեթե կեսը (49%) ասել է, որ համայնքի ավագանու անդամներից որևէ մեկին չի ճանաչում: Այս ցուցանիշը 2015թ.-ին 48% էր:

Նկատելի է նաև, որ 2015թ.-ի համեմատ, 2019թ.-ին նվազել է (15%-ից՝ 6%) այն հարցվածների բաժինը, որոնք ճանաչում են իրենց համայնքի ավագանու բոլոր անդամներին և ավելացել նրանց բաժինը, որոնք ճանաչում են ավագանու անդամներից մի քանիսին (17%-ից՝ 27%):

Գծապատկեր 1.1. Ավագանու անդամների ճանաչելիությունը համայնքի բնակիչների շրջանում, %



Ըստ 2019թ. հարցման տվյալների, չխոշորացված համայնքներում ավագանու անդամներն ավելի ճանաչված են բնակիչների կողմից, քան խոշորացված համայնքներում: Օրինակ՝ եթե չխոշորացված համայնքներում բնակչության 21%-ն է ճանաչում ավագանու բոլոր կամ գրեթե բոլոր անդամներին, ապա խոշորացված համայնքներում այս ցուցանիշը 13% է (Գծապատկեր 1.1.1): Ընդ որում, տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է[2]:

Գծապատկեր 1.1.1. Ավագանու անդամների ճանաչելիությունը համայնքի բնակիչների շրջանում ըստ համայնքի տիպի, %



Համայնքի բյուջե. ի՞նչ գիտեն բնակիչները դրա մասին

2015թ.-ին հարցվածների չնչին մասն է (2%) ասել, որ գիտի՝ որքան է իր համայնքի բյուջեի չափը: Չորս տարի անց իրավիճակը մնացել է նույնը. հարցվածների 98%-ը դեռևս չգիտի, թե տարեկան կտրվածքով որքան ֆինանսական միջոցներ է տնօրինում իր համայնքը (Գծապատկեր 1.2):

Գծապատկեր 1.2. Իրազեկվածություն համայնքի բյուջեի չափի վերաբերյալ, %



Այս ցուցանիշով, խոշորացված և չխոշորացված համայնքների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չկան:

Փոքր-ինչ աճել է բյուջեի ծախսային ուղղությունների մասին տեղեկացվածությունը. եթե 2015թ.-ին հարցվածների ընդամենը 27%-ը գիտեր, թե համայնքներն ուր են ուղղում իրենց բյուջեի միջոցները, ապա 2019թ.-ին՝ 32%-ը (Գծապատկեր 1.2.1):

Գծապատկեր 1.2.1. Իրազեկվածություն բյուջեի ծախսերի վերաբերյալ



[2] Իրականացվել է միջինների համեմատության ոչ պարամետրիկ «Ման-Ուիտնիի» թեստ (Asymp. Sig (2-tailed) = 0.023 (p<0.05), միջինների կարգը՝ խոշորացված = 469.49, չխոշորացված = 507.52): Վերլուծությունը չի ներառում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների տվյալները:

Սակայն, 2019թ. հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ի տարբերություն խոշորացված համայնքների, չխոշորացված համայնքների բնակիչներն ավելի տեղեկացված են, թե ՏԻՄ-երն ուր են ուղղում համայնքի բյուջեի եկամուտները: Չխոշորացված համայնքների դեպքում, հարցվածների 36%-ն է նշել, որ իրազեկ է այս հարցում, այնինչ խոշորացված համայնքների դեպքում՝ միայն 21%-ը: Տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է[3]:

Օրենսդրության իմացություն. ավագանու անդամի լիազորությունների կասեցում

ՏԻՄ-երի վերաբերյալ ՀՀ օրենսդրության համաձայն, ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել միայն ավագանու որոշմամբ: Եթե 2015թ.-ին այդ նորմի մասին տեղյակ էր հարցվածների 14%-ը, ապա չորս տարի անց՝ 11%-ը (Գծապատկեր 1.3): Հավանաբար, 2018թ. տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների ազդեցության ներքո, զգալիորեն ավելացել է այն հարցվածների բաժինը, որոնք կարծում են, թե այդ իրավասությամբ օժտված են համայնքի բնակիչները (51%-ից՝ 65%, համապատասխանաբար):

Գծապատկեր 1.3. Իրազեկվածություն ավագանու անդամի մանդատի կասեցման վերաբերյալ, %



[3] Իրականացվել է միջինների համեմատության ոչ պարամետրիկ «Ման-Ուիտնիի» տեստ (Asymp. Sig (2-tailed) =0.000 (p<0.05), միջինների կարգը՝ խոշորացված = 450.6, չխոշորացված = 523.6): Վերլուծությունը չի ներառում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների տվյալները:

2019թ. տվյալները ցույց են տալիս, որ օրենքի այս հոդվածի իմացության առումով, վիճակագրորեն նշանակալի տարբերություն կա խոշորացված և չխոշորացված համայնքների միջև՝ ի օգուտ վերջիններիս (Գծապատկեր 1.3.1): Եթե չխոշորացված համայնքների բնակիչների 12%-ը գիտի, որ ավագանին է վաղաժամ կասեցնում իր անդամի լիազորությունները, ապա խոշորացված համայնքների դեպքում այս ցուցանիշը կազմում է 5%[4]:

Գծապատկեր 1.3.1. Իրազեկվածություն ավագանու անդամի մանդատի կասեցման վերաբերյալ ըստ համայնքի տիպի, %



Այսպիսով, 2015թ.-ի համեմատ, 2019թ.-ին ՀՀ քաղաքացիների իրազեկվածության մակարդակն իրենց ավագանու անդամներին ճանաչելու, վերջիններիս լիազորությունները վաղաժամ դադարեցնելու ընթացակարգի, համայնքի բյուջեի չափի և բյուջեի ծախսերի ուղղությունների իմացության առումով մնացել է նույն՝ ցածր մակարդակի վրա: Սրան զուգահեռ, վերջին մի քանի տարիների ընթացքում տեղի ունեցող համայնքների խոշորացման գործընթացը կարծես թե բացասաբար է անդրադարձել միավորված բնակավայրերի բնակիչների՝ տեղական ինքնակառավարման հարցերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի վրա:

[4] Իրականացվել է միջինների համեմատության ոչ պարամետրիկ «Ման-Ուիտնիի» տեստ (Asymp. Sig (2-tailed) = 0.00 (p<0.05), միջինների կարգը՝ խոշորացված = 470.87, չխոշորացված = 506.33): Վերլուծությունը չի ներառում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների տվյալները:

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Խնդիրների բարձրաձայնում ՏԻՄ-երի առջև

Դիմու՞մ են արդյոք հայաստանցիները ՏԻՄ-երին՝ անձնական կամ համայնքային խնդիրներով: Ընդհանուր առմամբ, հայաստանցիների փոքր հատվածն է այդպես վարվում: Օրինակ, եթե 2015թ.-ին, հարցմանը նախորդած վերջին 6 ամիսների ընթացքում հարցվածների 17%-ն էր դիմել համայնքի ղեկավարին որևէ խնդրով, 2019թ.-ին այդ ցուցանիշը կրկին 17% է: Այնուամենայնիվ, 2019թ.-ին դիմումների փոքր աճ կարելի է արձանագրել, քանի որ հարցմանը նախորդած վեց ամիսների ընթացքում հարցվածների ևս 7%-ը դիմել է իր բնակավայրի վարչական ղեկավարին. խոսքը խոշորացված համայնքների մասին է (Գծապատկեր 2.1):

Որևէ անձնական կամ համայնքային խնդրով ավագանու անդամներին դիմածների թիվը շատ ավելի փոքր է: Օրինակ՝ 2019թ.-ին հարցվածների ընդամենը 4%-ն է դիմել ավագանու անդամներին: Այս ցուցանիշը 2015թ.-ից ի վեր գրեթե չի փոխվել (Գծապատկեր 2.1):

Գծապատկեր 2.1. ՏԻՄ-երին անձնական և համայնքային խնդիրներով դիմելու ցուցանիշները, 2015 և 2019թթ., %



Համայնքի ղեկավարին և համայնքի ավագանու անդամին անձնական կամ համայնքային խնդրի վերաբերյալ դիմելու առումով խոշորացված և չխոշորացված համայնքների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն բացահայտվել:

Մասնակցություն ՏԻՄ-երի աշխատանքներին

2015թ.-ին հարցվածների չնչին հատվածն էր որպես շահառու մասնակցել ՏԻՄ-երի աշխատանքներին: 2019թ.-ին իրավիճակն այս առումով չի փոխվել: Այսպես, եթե 2015թ.-ին, հարցմանը նախորդած վեց ամիսների ընթացքում իր համայնքի ավագանու նիստերին մասնակցել էր հարցվածների միայն 2.4%-ը, ապա 2019 թ.-ին՝ 1.8%-ը: Եթե 2015թ.-ին համայնքի քաղաքականությունների և ծրագրերի վերաբերյալ լսումներին մասնակցել էր հարցվածների 2.3%-ը, ապա 2019թ.ին՝ 2.1%-ը: Վերջին չորս տարիների ընթացքում շատ ցածր է մնացել մասնակցությունը նաև համայնքի բյուջեի վերաբերյալ քննարկումներին (Գծապատկեր 2.2):

Գծապատկեր 2.2. Մասնակցություն ՏԻՄ աշխատանքներին և հանրային միջոցառումներին, 2015թ. և 2019 թ., %



Ավագանու նիստերին, համայնքի քաղաքականությունների, պլանների և ծրագրերի, համայնքի բյուջեի վերաբերյալ լսումների/քննարկումների մասնակցության առումով խոշորացված և չխոշորացված համայնքների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն բացահայտվել:

Այսպիսով, Հայաստանի քաղաքացիները որևէ անձնական կամ համայնքային խնդիր լուծելու նպատակով ավելի շատ դիմում են իրենց համայնքի ղեկավարին: 2015թ.-ի համեմատությամբ, 2019թ.-ին համայնքի ղեկավարին (և համայնքի բնակավայրի վարչական ղեկավարին) դիմելու ցուցանիշը փոքր-ինչ աճել է՝ դառնալով 24%: Նույն խնդիրներով ավագանու անդամներին դիմող քաղաքացիների թիվը չորս տարվա ընթացքում փոփոխություն չի կրել՝ մնալով ցածր՝ 4%-5%-ի շրջանակներում: Ինչպես և 2015թ.-ին, չորս տարի անց, հանրային մասնակցությունը ՏԻՄ-երի կազմակերպած տարբեր քննարկումներին և լսումներին չնչին է:

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ-ԵՐԻՑ

Գոհունակություն ՏԻՄ-երի աշխատանքից

«ՀամաՏեղ»-ի հարցման արդյունքներով, 2019թ.-ին հայաստանցիների 15%-ն է «ընդհանուր առմամբ» բավարարված իրենց ՏԻՄ-երի աշխատանքից («լիովին» և «շատ» պատասխանների հանրագումարը): Ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 3.1-ը, այս ցուցանիշն ընդամենը չորս տոկոսով է բարձր 2015թ.-ի ցուցանիշից: Չորս տարվա ընթացքում, փոքր-ինչ նվազել է նաև ՏԻՄ-երի աշխատանքից ընդհանուր առմամբ չբավարարված հայաստանցիների բաժինը՝ 36%-ից դառնալով 27% («շատ քիչ» և «ամենևին չբավարարված» պատասխանների հանրագումարը):

Գծապատկեր 3.1. Գոհունակություն ՏԻՄ-երի աշխատանքից, 2015թ. և 2019թ., %



Ըստ Աղյուսակ 3.1-ի, ՏԻՄ-երի աշխատանքից ընդհանուր բավարարվածության առումով, 2019թ.-ին չխոշորացված համայնքները շահեկանորեն տարբերվում են խոշորացվածներից: Մասնավորապես, եթե չխոշորացված համայնքների բնակիչների բավարարվածության միջին գնահատականը 2.02 է, ապա խոշորացված համայնքների բնակիչներինը՝ 1.80: Ընդ որում, տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է[5]:

[5] Գնահատումն իրականացվել է 0-ից 5 բալանոց գնահատման սանդղակով (0 = Ամենևին բավարաված չեմ, 5 = Լիովին բավարարված եմ): Իրականացվել է միջինների համեմատության ոչ պարամետրիկ «Ման-Ուիտնիի» թեստ (Asymp. Sig (2-tailed) = 0.000 (p<0.05), միջինների կարգը՝ խոշորացված = 429.99, չխոշորացված = 497.3): Վերլուծությունը չի ներառում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների տվյալները:

Աղյուսակ 3.1. Բավարարվածությունը ՏԻՄ-երի աշխատանքից, ըստ համայնքի տիպի, 2019թ.

	Միջին գնահատական	Ստանդարտ շեղում
Խոշորացված համայնք	1.80	.912
Չխոշորացված համայնք	2.02	1.004

Ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 3.2–ը, 2015թ.-ի համեմատ, 2019թ.-ին հարցվածների կարծիքն իրենց համայնքների աշխատակազմի մասնագիտական որակների վերաբերյալ էապես չի փոխվել: Եթե 2015թ.-ին այդ որակները բարձր են գնահատել հարցվածների 23%-ը («բարձր» և «շատ բարձր» պատասխանների հանրագումարը), ապա չորս տարի անց՝ 20%-ը:

Գծապատկեր 3.2. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր համայնքի աշխատակազմի մասնագիտական որակները, 2015թ. և 2019թ., %



Ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 3.2-ը, չխոշորացված համայնքների բնակիչները, խոշորացված համայնքների բնակիչների համեմատ, ավելի բարձր են գնահատում իրենց համայնքի աշխատակազմի մասնագիտական որակները. տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է: Մասնավորապես, աշխատակազմի մասնագիտական որակների միջին գնահատականը խոշորացված համայնքների դեպքում կազմել է 2.98, մինչդեռ չխոշորացված համայնքների դեպքում այս ցուցանիշը 3.18 է[6]:

[6] Գնահատումն իրականացվել է 1-5 բալանոց սանդղակով (1 = Շատ ցածր, 5 = Շատ բարձր): Իրականացվել է միջինների համեմատության ոչ պարամետրիկ «Ման-Ուիտնիի» թեստ (Asymp. Sig (2-tailed) = 0.000 (p<0.05), միջինների կարգը՝ խոշորացված = 386.2, չխոշորացված = 448.68): Վերլուծությունը չի ներառում Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների տվյալները:

Աղյուսակ 3.2. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր համայնքի աշխատակազմի մասնագիտական որակները, ըստ համայնքի տիպի, 2019թ.

Համայնքի տիպը	Միջին գնահատական	Ստանդարտ շեղում
Խոշորացված համայնք	2.98	.788
Չխոշորացված համայնք	3.18	.916

Գծապատկեր 3.3-ը ցույց է տալիս հանրային գոհունակությունը ՏԻՄ-երի մատուցած մի շարք ծառայություններից 2019թ.-ին: Հարցվածների ամենամեծ մասը (52%) «լավ» է գնահատել «Համայնքի մաքրության պահպանում» ծառայության մատուցումը: Հաջորդ տեղում «Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառի կազմակերպությունների կառավարումն» է: Այս ծառայության մատուցումը «լավ» են գնահատել հարցվածների 43%-ը: Ամենից քիչ դրական գնահատականի են արժանացել «Ներհամայնքային ճանապարհների և կամուրջների պահպանում» և «Տեղական վեճերի լուծում» ծառայությունները: Վերջին երկուսը «լավ» են գնահատել հարցվածների համապատասխանաբար 24% և 20%-ը:

Գծապատկեր 3.3. Որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում ՏԻՄ-երը հետևյալ ծառայությունները, 2019թ., %



Ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 3.4-ը, 2015թ.-ի համեմատ, 2019թ.-ին փոքր-ինչ ավելացել է ՏԻՄ-երի կողմից մատուցվող մի շարք ծառայություններին «լավ» որակումը տվածների բաժինը: Դրանց շարքում են «Համայնքի մաքրության պահպանումը» (47%-ից 52%), «Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառի կազմակերպությունների կառավարումը» (38%-ից 43%), «Առողջապահական հաստատությունների կառավարումը» (27%-ից 34%), «Ջրային ռեսուրսների և անտառների պահպանությունը» (24%-ից 32%), ինչպես նաև «Առևտրի կետերի գործունեության կանոնակարգերի վերահսկողության պահպանումը» (26%-ից 31%):

Նույն գծապատկերի համաձայն, 2015թ.-ի համեմատ, նվազել է այն հարցվածների թիվը, որոնք բավարարված են (տալիս են «լավ» գնահատականը) ՏԻՄ-երի կողմից իրականացվող «Տեղական հարկերի, տուրքերի, վճարների դրույքաչափերի» սահմանման և գանձման (50%-ից 37%), ինչպես նաև «Ներհամայնքային ճանապարհների և կամուրջների» պահպանման (33%-ից 24%) գործողություններից:

Գծապատկեր 3.4. Որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում ՏԻՄ-երը հետևյալ ծառայությունները, 2015թ. և 2019թ. («լավ» պատասխանների բաժինը), %

2019թ.-ին ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայություններից՝ բնակիչների բավարարվածության առումով, խոշորացված և չխոշորացված համայնքների միջև տարբերություններ կամ չկան, կամ դրանք աննշան չափով ի օգուտ չխոշորացված համայնքների են: Օրինակ՝ ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 3.3-ի կանաչով ընդգծված տողերը, չխոշորացված համայնքների բնակիչների գոհունակությունն ավելի բարձր է ներհամայնքային ճանապարհների և կամուրջների պահպանումից, առողջապահական հաստատությունների կառավարումից, առևտրի կետերի գործունեության կանոնակարգերի պահպանումից, ինչպես նաև տեղական վեճերի լուծումից[7]:

Աղյուսակ 3.3. Որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում ՏԻՄ-երը հետևյալ ծառայությունները, ըստ համայնքի տիպի, 2019թ.

Ծառայություն	Համայնքի տիպը	Միջին գնահատական	Ստանդարտ շեղում
Համայնքի մաքրության պահպանում	Խոշորացված	3.42	1.103
	Չխոշորացված	3.45	1.178
Կրթության, մշակույթի, սպորտի բնագավառների կազմակերպությունների կառավարում	Խոշորացված	3.27	1.101
	Չխոշորացված	3.34	1.109
Ներհամայնքային ճանապարհների և կամուրջների պահպանում	Խոշորացված	2.21	1.317
	Չխոշորացված	2.72	1.233
Առողջապահական հաստատությունների կառավարում	Խոշորացված	2.93	1.175
	Չխոշորացված	3.11	1.045
Առևտրի կետերի գործունեության կանոնակարգերի պահպանում	Խոշորացված	3.11	1.018
	Չխոշորացված	3.26	.981
Սննդի կետերում առողջապահական նորմերի ու չափորոշիչների պահպանում	Խոշորացված	3.04	1.024
	Չխոշորացված	3.10	1.078
Տեղական վեճերի լուծում	Խոշորացված	3.19	.880
	Չխոշորացված	3.34	.951
Ջրային ռեսուրսների և անտառների պահպանություն	Խոշորացված	3.16	1.100
	Չխոշորացված	3.11	1.178
Օրենքի և օրինակարգի պահպանում	Խոշորացված	3.37	.836
	Չխոշորացված	3.42	.995
Տեղական հարկերի, տուրքերի, վճարների դրույքաչափերի սահմանում և գանձում	Խոշորացված	3.48	.881
	Չխոշորացված	3.53	1.016

[7] Գնահատումն իրականացվել է 0-ից 5 բալանոց սանդղակով (0 = Ամենևին, 5 = Շատ լավ): Իրականացվել է միջինների համեմատության ոչ պարամետրիկ «Ման-Ուիտնիի» թեստ, նշված փոփոխականների համար Asymp. Sig (2-tailed)<0.05: Վերլուծությունը չի ներառում Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների տվյալները:

Վստահություն ՏԻՄ-երի հանդեպ

Գծապատկեր 3.5-ի համաձայն, 2015թ. Համեմատ, 2019թ.-ին հանրային վստահությունը համայնքի ղեկավարների և ավագանու անդամների հադեպ չի աճել: Մասնավորապես, եթե 2015թ.-ին համայնքի ղեկավարին և ավագանու անդամին վստահում էին հարցվածների համապատասխանաբար 38%-ը և 24%-ը («լիովին» և «շատ» պատասխանների հանրագումարը), ապա 2019թ.-ին այդ ցուցանիշները կազմել են 39% և 23%, համապատասխանաբար: Այնուամենայնիվ, չորս տարվա ընթացքում փոքր-ինչ նվազել է համայնքի ղեկավարներին և ավագանու անդամներին «ամենևին» չվստահող հարցվածների բաժինը՝ առաջինի դեպքում՝ 23%-ից 12%, երկրորդի դեպքում՝ 28%-ից 16%:

Ինչ վերաբերում է խոշորացված համայնքներում գործող նոր պաշտոնյաների՝ բնակավայրերի վարչական ղեկավարների հանդեպ վստահությանը, ապա 2019թ.-ին խոշորացված համայնքներում հարցվածների ընդամենը 24%-ն է վստահել նրանց («լիովին» և «շատ» պատասխանների հանրագումարը): Հարցվածների 22%-ն ասել է, որ բնակավայրի վարչական ղեկավարին որպես կանոն չի վստահում («քիչ», «երբեմն» և «ամենևին» պատասխանների հանրագումարը): Հետաքրքիր է, որ հարցվածների մեկ քառորդը դժվարացել է պատասխանել՝ արդյո՞ք վստահում է այս պաշտոնյային, թե ոչ:

Գծապատկեր 3.5. Հանրային վստահությունը համայնքի ղեկավարի, ավագանու անդամի և բնակավայրի վարչական ղեկավարի նկատմամբ, 2015թ. և 2019թ., %



* Բնակավայրի վարչական ղեկավարին վերաբերող հարցին պատասխանել են միայն խոշորացված համայնքներում հարցվածները (N=802):

Ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 3.4-ը, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների հանդեպ վստահության առումով առկա են վիճակագրորեն նշանակալի տարբերություններ խոշորացված և չխոշորացված համայնքների միջև. համայնքի ղեկավարներին և ավագանու անդամներին վիճակագրական նշանակալիությամբ առավել շատ վստահում են չխոշորացված համայնքներում[8]:

Աղյուսակ 3.4. Հանրային վստահությունը համայնքի ղեկավարի և ավագանու անդամների հանդեպ, ըստ համայնքի տիպի, 2019թ.

	Համայնքի տիպը	Միջին գնահատական	Ստանդարտ շեղում
Համայնքի ղեկավար	Խոշորացված համայնք	2.97	1.416
	Չխոշորացված համայնք	3.52	1.423
Ավագանու անդամ	Խոշորացված համայնք	2.65	1.418
	Չխոշորացված համայնք	2.99	1.480

ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության կարևոր աղբյուրներից մեկը, թերևս, ՏԻՄ-երի աշխատանքի թափանցիկությունն է: Ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 3.6-ը, 2015թ.-ի համեմատ, 2019թ.-ին հարցվածների կարծիքն իրենց ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության վերաբերյալ էապես չի փոխվել: Մասնավորապես, եթե 2015թ.-ին հարցվածների 13%-ն է բարձր գնահատել ՏԻՄ-երի աշխատանքի թափանցիկությունը («Շատ բարձր» և «Բարձր» պատասխանների հանրագումարը), ապա չորս տարի անց այդ ցուցանիշը կազմել է 15%: Հարկ է նշել, որ 2019թ.-ին, փոքր-ինչ նվազել է այն հարցվածների բաժինը, որոնք ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը «Շատ ցածր» են գնահատել (23%-ից 12%):

[8] Գնահատումն իրականացվել է 0-ից 5 բալանոց սանդղակով (0 = Ամենևին, 5 = Լիովին): Իրականացվել է միջինների համեմատության ոչ պարամետրիկ «Ման-Ուիտնիի» թեստ (Asymp. Sig (2-tailed) = 0.00 ($p<0.05$), միջինների կարգը՝ Համայնքի ղեկավար (խոշորացված) = 400.51, Համայնքի ղեկավար (չխոշորացված) = 514.07, Ավագանի (խոշորացված) = 385.11, Ավագանի (չխոշորացված) = 448.28): Վերլուծությունը չի ներառում Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների տվյալները:

Գծապատկեր 3.6. ՏԻՄ-երի աշխատանքի թափանցիկության հանրային գնահատականը, 2015թ. և 2019թ., %



ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության գնահատման առումով խոշորացված և չխոշորացված համայնքների միջև առկա է վիճակագրորեն նշանակալի տարբերություն: Մասնավորապես, ՏԻՄ-երի գործունեությունն առավել թափանցիկ են գնահատել չխոշորացված համայնքների բնակիչները՝ միջին գնահատական՝ 2.80: Խոշորացված համայնքների բնակիչների միջին գնահատականը 2.64 է[9] (Աղյուսակ 3.5):

Աղյուսակ 3.5. ՏԻՄ-երի աշխատանքի թափանցիկության հանրային գնահատականը, ըստ համայնքի տիպի, 2019թ.

Համայնքի տիպը	Միջին գնահատական	Ստանդարտ շեղում
Խոշորացված համայնք	2.64	.922
Չխոշորացված համայնք	2.80	1.008

[9] Գնահատումն իրականացվել է 1-5 բալանոց սանդղակով (1 = Շատ ցածր, 5 = Շատ բարձր): Իրականացվել է միջինների համեմատության ոչ պարամետրիկ «Ման-Ուիտնիի» թեստ (Asymp. Sig (2-tailed) =0.008 (p<0.05), միջինների կարգը՝ խոշորացված = 391.02, չխոշորացված = 432.82): Վերլուծությունը չի ներառում Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների տվյալները:

ՏԻՄ-երի կողմից որոշումների կայացման ներառականություն

Ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 3.7–ը, թե 2015թ.-ին, և թե 2019թ. հարցվածների 42%-ի կարծիքով համայնքի ղեկավարը լսում և հաշվի է առնում մարդկանց կարծիքը («Միշտ», «Շատ հաճախ» և «Հաճախ» պատասխանների հանրագումարը): Եթե 2015թ.-ին հարցվածների 32%-ի կարծիքով էր ավագանու անդամը լսում և հաշվի առնում մարդկանց կարծիքը, ապա չորս տարի անց այդ ցուցանիշը կազմել է 31% («Միշտ», «Շատ հաճախ» և «Հաճախ» պատասխանների հանրագումարը):

Հետաքրքիր է, որ և համայնքի ղեկավարի, և ավագանու անդամի դեպքում, գրեթե կրկնակի նվազել է «Երբեք» պատասխանը տվածների բաժինը:

Ինչ վերաբերում է խոշորացված համայնքներում գործող նոր պաշտոնյայի՝ բնակավայրի վարչական ղեկավարի վերաբերյալ ընկալումներին, ապա 2019թ.-ին խոշորացված համայնքներում հարցվածների 30%-ն ասել է, որ նրանք լսում և հաշվի են առնում բնակիչների կարծիքը: Միևնույն ժամանակ, հարցվածների մեկ երրորդը (33%) դժվարացել է պատասխանել այս հարցին:

Գծապատկեր 3.7. Որքա՞ն հաճախ են համայնքի ղեկավարը, ավագանու անդամները և բնակավայրի վարչական ղեկավարը լսում և հաշվի առնում մարդկանց կարծիքը, 2015թ. և 2019թ., %



*Բնակավայրի վարչական ղեկավարին վերաբերող հարցին պատասխանել են միայն խոշորացված համայնքներում հարցված բնակիչները (N=833):

Միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 3.6-ը, 2019թ. հարցման տվյալներով, չխոշորացված համայնքների ղեկավարները և ավագանու անդամներն ավելի հաճախ են լսում և հաշվի առնում մարդկանց կարծիքը, քան խոշորացված համայնքների ղեկավարները և ավագանու անդամները: Տարբերությունները երկու տիպի համայնքների միջև վիճակագրորեն նշանակալի են[10]:

Աղյուսակ 3.6. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի կողմից մարդկանց լսելու և հաշվի առնելու գնահատականը, ըստ համայնքի տիպի, 2019թ.

	Համայնքի տիպը	Միջին գնահատական	Ստանդարտ շեղում
Ձեր կարծիքով, որքա՞ն հաճախ է համայնքի ղեկավարը լսում և հաշվի առնում մարդկանց	Խոշորացված	1.59	1.145
	Չխոշորացված	2.09	1.257
Ձեր կարծիքով, որքա՞ն հաճախ է ավագանու անդամը լսում և հաշվի առնում մարդկանց	Խոշորացված	1.35	1.133
	Չխոշորացված	1.82	1.264

Այսպիսով, 2019թ.-ին հարցված հայաստանցիների մոտ մեկ հինգերորդն է ընդհանուր առմամբ գոհ ՏԻՄ-երի աշխատանքից, ընդ որում այս ցուցանիշն էականորեն չի տարբերվում 2015թ.-ի հարցման արդյունքներից: Ինչպես և 2015թ.-ին, չորս տարի անց, հարցվածների մոտավորապես մեկ հինգերորդն է բարձր գնահատել իրենց ՏԻՄ-երի աշխատակազմի մասնագիտական որակները: Ընդ որում, երկու դեպքում էլ, չխոշորացված համայնքները շահեկանորեն տարբերվում են խոշորացվածներից: Չխոշորացված համայնքների բնակիչներն ավելի գոհ են ՏԻՄ-երի աշխատանքից և ավելի բարձր են գնահատում ՏԻՄ-երի մասնագիտական որակները:

[10] Գնահատումն իրականացվել է 0-ից 4 բալանոց սանդղակով (0 = Երբեք, 4 = Միշտ): Իրականացվել է միջինների համեմատության ոչ պարամետրիկ «Ման-Ուիտնիի» թեստ (Asymp. Sig (2-tailed) = 0.00 ($p<0.05$), միջինների կարգը՝ Համայնքի ղեկավար (խոշորացված) = 374.60, Համայնքի ղեկավար (չխոշորացված) = 477.79, Ավագանի (խոշորացված) = 335.61, Ավագանի (չխոշորացված) = 421.31): Վերլուծությունը չի ներառում Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների տվյալները:

ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների հանդեպ հանրային գնահատականը չորս տարվա ընթացքում նշանակալի փոփոխություններ չի կրել: Որոշ ծառայությունների դեպքում, գնահատականի աննշան բարելավում է գրանցվել (5%-ի սահմաններում): «Առողջապահական հիմնարկների կառավարում» և «Ջրային ռեսուրսների և անտառների պահպանում» ծառայությունների դեպքում դրական փոփոխությունը փոքր-ինչ ավելի մեծ է (7-8%-ի սահմաններում): Միևնույն ժամանակ, խոշորացված համայնքների համեմատ, չխոշորացված համայնքների բնակիչներն ավելի գոհ են ՏԻՄ-երի կողմից մատուցվող մի շարք ծառայություններից (օրինակ՝ ներհամայնքային ճանապարհների պահպանումից կամ առողջապահական հիմնարկների կառավարումից):

Չորս տարվա ընթացքում, հանրային վստահությունը համայնքի ղեկավարների և ավագանու անդամների հադեպ մնացել է գրեթե նույնը: Ընդ որում, համայնքի ղեկավարներն ավելի մեծ վստահություն են վայելում, քան ավագանու անդամները (համապատասխանաբար 39% և 23%, 2019թ.-ին): Խոշորացված համայնքներում հարցվածների մոտավորապես մեկ քառորդն է վստահում բնակավայրի վարչական ղեկավարին:

2015թ.-ի համեմատ, էապես չի փոխվել նաև ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության վերաբերյալ հարցվածների գնահատականը՝ մնալով ցածր մակարդակի վրա: 2019թ.-ին, հարցվածների 15%-ն է բարձր գնահատական տվել ՏԻՄ-երի թափանցիկությանը: Հարկ է նշել, որ հանրային վստահության և աշխատանքի թափանցիկության առումով, չխոշորացված համայնքները կրկին շահեկանորեն տարբերվում են խոշորացված համայնքներից: Չխոշորացված համայնքներում հարցվածներն ավելի շատ են վստահում համայնքի ղեկավարին և ավագանու անդամներին, ինչպես նաև ավելի բարձր են գնահատում ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը: Բացի այդ, ըստ հարցվածների, չխոշորացված համայնքներում համայնքների ղեկավարները և ավագանու անդամներն ավելի շատ են լսում և հաշվի առնում բնակիչների կարծիքները, քան խոշորացված համայնքներում:

Հարկ է ավելացնել, որ 2015թ.-ի համեմատ, 2019թ.-ին, ընդհանուր առմամբ, փոքր-ինչ նվազել է ՏԻՄ-երի գործունեության տարբեր ոլորտներին ծայրահեղ բացասական գնահատական տվող հարցվածների թիվը:

ՄԱՍ II.

«ՀԱՄԱՏԵՂ» ԾՐԱԳՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱՐԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.

ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՆ ԱՐՏԱԾԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ (ԽՈՇՈՐԱՑՈՒՄ, ԲՅՈՒՋԵ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ) ԿԱՐԵՎՈՐ ՏԻՄ-ԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գրականություն և հետազոտության խնդրի ձևակերպում

Հետազոտությունները ցույց են տվել, որ ֆիսկալ ապակենտրոնացման գործընթացի արդյունավետության համար կարևոր են ՏԻՄ-երի գործունեության հանրային ընկալումները և հանրության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը[11]: Հետևաբար, անհրաժեշտ է բացահայտել վերջիններիս վրա ազդող գործոնները, և մշակել դրանք թիրախավորող հանրային քաղաքականություն:

Ապրիորի կարող ենք ենթադրել, որ ՏԻՄ-երի նկատմամբ համայնքի բնակիչների վերաբերմունքը պայմանավորված է արտաքին և ներքին գործոններով: Առաջինները այս հետազոտության շրջանակներում ընդունենք ՏԻՄ-երի ազդեցությունից դուրս գտնվող (ինչպիսիք են գործող օրենսդրությունը, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական գործոնները), իսկ երկրորդները՝ ՏԻՄ-երի «ձեռքում» գտնվող գործոնները (ինչպիսիք են ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և բնակչության հետ հաղորդակցումը):

ՏԻՄ-երի հանրային ընկալումներին վերաբերող հետազոտություններից մեկը՝ Հունգարիայի օրինակով, ցույց է տվել, որ ՏԻՄ-երի գործունեության ընկալումների համար կարևոր են համայնքի բնակչության բարեկեցության մակարդակը և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը, որոնց ազդեցությունը, ըստ հեղինակների, «բացարձակ չէ, և ունի ոչ միանշանակ բնույթ»: Սակայն դրան զուգահեռ նույն հետազոտությունը կարևորում է տեղական իշխանությունների, առաջին հերթին՝ համայնքի ղեկավարի արդյունավետ հաղորդակցումը բնակչության հետ: Հետազոտության հիմնական եզրակացությունն այն է, որ ՏԻՄ-երի հանրային ընկալումները բարելավելու համար անհրաժեշտ է բարելավել բնակչության բարեկեցությունը և վարել ակտիվ հաղորդակցման քաղաքականություն՝ ունենալով վերջինի համար երկարաժամկետ հանձնառություն և նվիրելով բավարար ռեսուրսներ[12]:

Հայաստանի համար նույն հարցի շուրջ հետազոտություն է իրականացրել ՀՌԿԿ-Հայաստանը (2017), որով բացահայտվել է, որ Հայաստանում տեղական մակարդակում քաղաքական վստահության ձևավորման ներքին գործոններ կան, և հետևաբար ՏԻՄ-երը արդյունավետ և թիրախավորված աշխատանքի միջոցով կարող են շահել կամ պահպանել հանրության վստահությունը: Այդ գործոններն են համայնքա-

[11] Տե՛ս Bernátová, M., Kuklis, P., Malíková, L., Rončák, I., & Vaňová, A. (2001). Public perception of local government in Slovakia. Public Perception of Local Governments, p. 264.

[12] Տե՛ս Hajnal, G. (2001). Hopes and reality: the first decade of the Hungarian local government system in the eyes of the public. Public Perception of Local Governments, p. 163.

յին ծառայությունների մատուցման որակի, ՏԻՄ-երի թափանցիկության, տեղական ժողովրդավարության և կոռուպցիայի մակարդակի հանրային ընկալումները[13]:

Սակայն որևէ հետազոտություն չի բացահայտել, թե ինչ կարևորություն ունեն արտաքին գործոնները: Մեր կարծիքով, ՏԻՄ-երի գործունեության հանրային ընկալումների և տեղական ինքնակառավարմանը հանրության մասնակցության վերաբերյալ քաղաքականություն մշակողների պատկերացումը ավելի ամբողջական, իսկ բարելավելու քաղաքականությունը ավելի արդյունավետ կլինի, եթե հիմքում ունենա գործոնային վերլուծություն:

Սույն հետազոտությամբ նպատակ է դրվել վիճակագրորեն գնահատել արտաքին գործոնների դերը ՏԻՄ-երի հանրային ընկալումների ձևավորման համար, և ուղենիշներ առաջարկել հանրային քաղաքականությանը: Այս նպատակին հասնելու համար խնդիր է դրվում գնահատելու հետևյալ գործոնների ազդեցությունը ուսումնասիրված համայնքներում ՏԻՄ-երի հանրային ընկալումների վրա.

- համայնքների խոշորացում,
- համայնքային բյուջե,
- համայնքների սոցիալ-տնտեսական վիճակ:

Մեթոդի նկարագրություն

Դրված խնդիրների լուծման տեղեկատվական հիմք են ծառայում «ՀաՄաՏեղ» ծրագրի շրջանակում Հայաստանի 81 համայնքներում 1408 անձանց շրջանում 2019թ-ին կատարված հարցումների արդյունքները[14], համայնքային բյուջեների տվյալները 2018թ-ի դրությամբ և ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած՝ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման տվյալների բազան, որը բնութագրում է իրավիճակը 2016թ-ի դրությամբ:

ՏԻՄ-երի հանրային ընկալումները հետազոտության մեջ արտացոլվում են հարցումների արդյունքներից առանձնացված կամ դրանց հիման վրա մեր կողմից հաշվարկված 7 փոփոխականներ, որոնք են. 1. Համայնքի ավագանու որոշումների համար այլ գործոնների կարևորության ընկալումը, 2. ՏԻՄ-երի նկատմամբ վստահությունը, 3. ՏԻՄ-երի որոշումների ներառականության ընկալումը, 4. ՏԻՄ-երի կողմից իրենց գործունեության վերաբերյալ բնակիչներին իրազեկման ընկալումը, 5. ՏԻՄ-երի թափանցիկության ընկալումը, 6. ՏԻՄ-երի մատուցած հանրային ծառայությունների որակի ընկալումը, 7. ՏԻՄ-երի աշխատանքից բնակչության բավարարվածությունը:

Ուսումնասիրված համայնքներում ՏԻՄ-երի հանրային ընկալման տարբերությունների մեջ համայնքների խոշորացման դերը բացահայտելու համար մշակվել են գծային ռեգրեսիոն մոդելներ կեղծ փոփոխականով, իսկ համայնքային բյուջեի և համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի[15]

[13] Տե՛ս Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան (2017). ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության գործոնները. բանալին ՏԻՄ-երի ձեռքում է. Հանրային քաղաքականության ուղեցույց:

[14] Ընտրանքում ներառված են հայաստանյան համայնքների շուրջ 16%-ը, իսկ հարցումների արդյունքներին մասնակցել են այդ համայնքների բնակիչների 0.01%-ից 2.8%-ը (միջինում՝ 0.3%-ը):

[15] Համայնքի բյուջեն էմպիրիկ վերլուծության մեջ արտացոլվել է 1 շնչին բաժին ընկնող ծախսերի ընդհանուր և ոլորտային ցուցանիշներով, ինչպես նաև

դերը ուսումնասիրվել է զույգային կոռելացիոն վերլուծություններով: ՏԻՄ-երի հանրային ընկալումների հետ համայնքային բյուջեի և համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի փոխառնչությունների ներքին կառուցվածքը հասկանալու համար իրականացվել է կլաստերային վերլուծություն՝ K-means ալգորիթմի միջոցով:

Արդյունքներ

Համայնքի խոշորացման գործոն: Այն նշանակալիորեն բացասաբար է ազդել ՏԻՄ-երի հանրային ընկալումների վրա՝ բացառությամբ այլ գործոններից ավագանու որոշումների կախվածության ցուցանիշի: Միևնույն ժամանակ, ազդեցության դերը բավականին փոքր է և կարող է գնահատվել մինչև 7%-ի շրջանակներում:

Համայնքային բյուջե: Բնակչության 1 շնչին ընկնող համայնքների բյուջետային ծախսերի և ՏԻՄ-երի գործունեության հանրային ընկալումների միջև վիճակագրորեն նշանակալի կապ առկա չէ, սակայն ՏԻՄ-երի հանրային ընկալումների վրա նշանակալիորեն դրական է ներգործում ֆոնդային բյուջեի մեկ բնակչին ընկնող ծախսերի մակարդակը: Ոլորտային ծախսերից ՏԻՄ-երի հանրային ընկալումների հետ նշանակալիորեն դրական են փոխկապված համայնքային բյուջեի միջոցներով կատարած շինարարական ծախսերը, մասնավորապես՝ համայնքի բյուջեի ծախսերում դրանց ունեցած մասնաբաժինը: Միևնույն ժամանակ, սեփական եկամուտների մասնաբաժինը և բնակչության 1 շնչին ընկնող աշխատավարձի գծով համայնքային բյուջեի ծախսերը նշանակալիորեն հակադարձ են փոխկապված ՏԻՄ-երի գործունեության հանրային գնահատականների հետ: Բացահայտվել է նաև, որ համայնքի բյուջեի և ՏԻՄ-երի հանրային ընկալումների կապը ոչ գծային հատկություն ունի: Մասնավորապես, բարձր բյուջետային ծախսերի մակարդակ ունեցող համայնքներում ծախսերի մակարդակը համեմատաբար ավելի շատ է բացատրում ՏԻՄ-երի աշխատանքից բավարարվածության աստիճանը:

Համայնքի սոցիալ-տնտեսական վիճակ: Համայնքի տնտեսական վիճակի փոփոխականի և ՏԻՄ-երի գործունեության հանրային գնահատականների միջև նշանակալի կապ չկա, իսկ սոցիալական խոցելիության և ՏԻՄ-երի գործունեությունից բավարարվածության միջև նշանակալի հակադարձ կապ է առկա: Միաժամանակ, այդ կապը ոչ գծային հատկություն ունի, և բարձր սոցիալական խոցելիությունը գնալով ավելի ցածր բավարարվածության է հանգեցնում: Բացահայտվել է նաև, որ այդ գործոնների այդպիսի անբարենպաստ զուգակցում ունեցող համայնքներում սոցիալական խոցելիության բարձր գնահատականը հիմնականում պայմանավորված է եղել խմելու ջրի, առողջապահության և հանրակրթության մատչելիության հիմնախնդիրների միաժամանակյա առկայությամբ:

Ամփոփում և առաջարկություններ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ներծին և արտածին գործոնների միջև կապերը ընդհանուր առմամբ թույլ

վերջիններս՝ ընդհանուրում կշիռներով, իսկ համայնքի սոցիալ տնտեսական վիճակը ուսումնասիրվել է 15 ցուցանիշների օգնությամբ, որոնք խմբավորվել են երկու փոփոխականներում՝ համայնքի սոցիալ-տնտեսական վիճակ և սոցիալական խոցելիություն:

են և հատվածավորված: Սա թույլ է տալիս ենթադրել, որ ՏԻՄ-երի գործունեության հանրային գնահատականները պայմանավորված են ոչ այնքան ռեսուրսների առկայությամբ, որքան դրանք արդյունավետ օգտագործելու կարողությամբ:

Արտածին գործոններից առավել կարևոր են համայնքային բյուջեների միջոցներով հանրային ակտիվների ստեղծումը և սոցիալական ապահովվածությունը՝ հատկապես խմելու ջրի, առողջապահության և հանրակրթության հասանելիության առումով: Առաջինը շղթայական եղանակով դրական ազդեցություն կարող է ունենալ ոչ միայն ՏԻՄ-երի աշխատանքից բավարարվածության, ՏԻՄ-երի նկատմամբ վստահության և մատուցվող ծառայությունների որակի ընկալումների, այլև բնակիչների՝ ՏԻՄ-երի կողմից իրազեկված լինելու, թափանցիկ աշխատելու և որոշումների կայացման մեջ իրենց կարծիքը լսելու և հաշվի առնելու գնահատականների հետ: Միևնույն ժամանակ բացահայտվել է, որ համայնքների խոշորացումը, համայնքի բյուջեի եկամուտներում համայնքի կողմից հավաքագրվող բյուջետային (սեփական) եկամուտների մասնաբաժնի ավելացումը և համայնքի բյուջեի ծախսերում աշխատավարձի գծով ծախսերի ավելացումը ռիսկեր են պարունակում ՏԻՄ-երի հանրային ընկալումների համար:

Ելնելով հետազոտության արդյունքներից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկում ենք.

- Բնակչության հետ ակտիվ հաղորդակցմամբ և տեղական ինքնակառավարմանը մասնակցության խթանմամբ թույլ չտալ խոշորացման գործընթացի արդյունքում առանձին բնակավայրերի հեռացում և մեկուսացում համայնքի կառավարման գործընթացից՝ մեղմելու համայնքների խոշորացման առաջացրած՝ ՏԻՄ-երի հանրային ընկալումների վատթարացման ռիսկերը:
- Համայնքային ծախսերում առաջնահերթության մեխանիզմներ մշակել կապիտալ ծախսերի համար, նաև հաշվի առնելով, որ դրանք ամենաարդյունավետն են ՏԻՄ-երի հանրային ընկալումների բարելավման տեսակետից:
- Համայնքի բյուջե գանձվող տեղական հարկերին, տուրքերին և վճարներին առնչվող հարկային քաղաքականության մշակման ժամանակ հաշվի առնել, որ տեղական հարկերի ավելացումը բացասաբար է անդրադառնում ՏԻՄ-երի հանրային ընկալումների վրա:
- Շարունակել համայնքի վարչական ծախսերի (մասնավորապես՝ աշխատավարձի գծով ծախսերի) օպտիմալացման գործընթացը, հաշվի առնելով նաև, որ ՏԻՄ-երի հանրային ընկալումների տեսակետից աշխատավարձի գծով ծախսերի նվազեցման ազդեցությունը դրական է գնահատվում:
- Համայնքային հիմնախնդիրներին արձագանքելու տեսակետից առաջնահերթությունը տալ խմելու ջրի, առողջապահության և հանրակրթության հասանելիության ապահովմանը:

ԱՐՄԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ.

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. 2015 ԵՎ 2019 ԹԹ.

Հետազոտվող խնդրի նկարագրություն

Հետազոտության շրջանակներում առաջ են քաշվել մի շարք հիմնական հարցեր: Դրանք են՝

- Արդյո՞ք խոշորացված համայնքների բնակիչներն ավելի բավարարված են իրենց համայնքների կողմից մատուցվող ծառայության որակից:
- Արդյո՞ք ուղղակի ժողովրդավարության միջոցով համայնքի ղեկավար ընտրող համայնքների բնակիչներն ավելի բավարարված են իրենց համայնքի ՏԻՄ-երի և աշխատակազմի աշխատանքից:
- Արդյո՞ք համայնքի չափը դրականորեն կամ բացասականորեն է ազդում բնակիչների՝ համայնքների կողմից իրենց մատուցվող ծառայության որակից բավարարվածության վրա:
- Արդյո՞ք համայնքի բնակիչների թիվը դրականորեն կամ բացասականորեն է ազդում բնակիչների՝ համայնքների կողմից իրենց մատուցվող ծառայության որակից բավարարվածության վրա:
- Արդյո՞ք խոշորացված համայնքներում ավելի բարձր է տեղական ժողովրդավարության ընկալումը:
- Արդյո՞ք Երևանում ավելի բարձր է տեղական ժողովրդավարության ընկալումը:

Գրականության տեսություն

Հետազոտության շրջանակներում օգտագործվել են մի շարք տեսական աղբյուրներ: Առաջին հերթին, ելնելով այն փաստից, որ այս հետազոտությունը մեծամասամբ առնչվում է համայնքային ծառայությունների որակին, ուշադրություն է դարձվել այն փաստին, թե ինչպես է սովորաբար չափվում այդ ծառայությունների որակը, և որոնք են հիմնական տեսական մոտեցումներն այստեղ: Այս ոլորտի ուսումնասիրությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խոշոր խմբերի: Առաջին խումբը բաղկացած է այն գիտնականներից, որոնք ՏԻՄ-երը համարում են որոշումներ կայացնող մարմիններ, որոնց հիմնական նպատակն է ռեսուրսների բաշխումը և մեծ թվով հանրային ծառայություններ մատուցելը քաղաքացիների պահանջով: Վերջին տարիներին այս ցանկին դասվող առավել նշանակալի ուսումնասիրություններից է Gimenez և Prior (2007), ի թիվս շատերի: Գիտնականների մյուս խումբը նախընտրում է ուսումնասիրել միայն մեկ ծառայություն՝ նպատակ ունենալով ապահովել այդ ծառայության առավել հիմնարար և խիստ ակնարկ: Այս

խմբին են դասվում Drake և Simper (2003)-ի ուսումնասիրությունը ոստիկանական ծառայության, Athanassopoulos (1998)-ի ուսումնասիրությունը հրդեհների կանխարգելման, Karlaftis (2004)-ի ուսումնասիրությունը հանրային տրանսպորտի, Tupper և Resende (2004)-ի ուսումնասիրությունը ջրամատակարարման և Bel (2006)-ի ուսումնասիրությունը աղբահանության վերաբերյալ:

Անհրաժեշտ է նաև արձանագրել, որ որոշ հետազոտություններ ուշադրություն են դարձնում հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության և որակի վրա ազդող որևէ փոփոխականի ուսումնասիրությանը: Դրանց շարքում համայնքի չափը այս ուսումնասիրության համար առավել կարևորագույն փոփոխականներից մեկն է: Որոշ գիտնականներ գտել են, որ բնակչության ավելի բարձր թիվը և/կամ խտությունը հանգեցնում են ավելի քիչ արդյունավետության (օր՝ Worthington և Dollery, 2001), մինչդեռ մեկ այլ խումբ հասել է բևեռային արդյունքների (վերջին և վառ օրինակն այստեղ՝ Denters et al., 2014):

Շվեյցարական համայնքների շրջանում իրականացված Lander-ի ուսումնասիրությունը (2002) եզակի տաքսոնոմիա է առաջարկում, որի միջոցով կարելի է չափել տեղական ժողովրդավարության մակարդակը: Այս համաթիվը բաղկացած է վեց պարամետրերից՝ սոցիալական ինտեգրում, հետաքրքրվածություն, գիտելիք (քաղաքական), վստահություն, բավարարվածություն և մասնակցություն: Անցնելով առաջ՝ նշենք, որ հիմնվելով ժողովրդավարության շուրջ դիսկուրսի և երևույթի ամբողջական ուսումնասիրության նպատակայնության կարիքներից՝ տվյալ ուսումնասիրության շրջանակներում ավելացվել է ևս երկու պարամետր՝ թափանցիկություն և հաշվետվողականություն, որոնք թույլ կտան ավելի ամբողջական պատկերացում կազմել տեղական ժողովրդավարության վերաբերյալ պատկերացումների մասին:

Մեթոդ. տվյալադարան, փոփոխականներ, վիճակագրական թեսթեր

Օգտվելով հետազոտության բացատրական դիզայնից՝ ես բացատրում եմ բնակավայրի տեսակի, բնակչության թվի և չափի ազդեցությունները տեղական ժողովրդավարության և ՏԻՄ-երի կողմից տրամադրվող ծառայությունների որակի վերաբերյալ հանրային կարծիքի վրա: Տվյալների վերլուծության համար օգտագործվել է «ՀաՄաՏեղ» ծրագրի շրջանակներում 2015 և 2019 թվականներին իրականացված համապետական ներկայացուցչական հարցումը: Վերլուծության շրջանակներում տվյալների բազային ավելացվել է ևս երկու փոփոխական, որոնք ցույց են տալիս յուրաքանչյուր բնակավայրում բնակվող քաղաքացիների թիվը, ինչպես նաև բնակավայրի զբաղեցրած տարածքը/չափսը: Այս ամենից հետո տվյալների բազան բաժանվել է երկու խմբի: Առաջին խմբում ընդգրկվել են միայն այն փոփոխականները, որոնք ներառված են եղել ինչպես 2015, այնպես էլ 2019 թվականների հարցումներում՝ ընդհանուր 44 բնակավայր: Այս բազայի հետ իրականացվել է «Անկախ նմուշների թի-թեսթ» (Independent samples t-test)՝ այսուհետ՝ t-test: Երկրորդ խմբում պահպանվել են բոլոր փոփոխականները, իսկ այս դեպքում իրականացվել է շեղման միակողմանի բազմաչափ վերլուծություն (Oneway Multivariate Analysis of Variance

(MANOVA)) կախյալ փոփոխականների նկատմամբ:

Անկախ փոփոխականները հինգն են՝ տարի (2015, 2019), համայնքի տիպ 1 (Երևան, այլ քաղաքային համայնք, գյուղական համայնք), համայնքի տիպ 2 (խոշորացված, չխոշորացված, այլ մեծ քաղաք), ինչպես նաև բնակչության թիվ և զբաղեցրած տարածք (համայնքի չափ):

Կախյալ փոփոխականները ամփոփված են տեղական ժողովրդավարության համաթվի տեսքով, որը բաղկացած է հետևյալ խմբերից՝ սոցիալական ինտեգրում, հետաքրքրվածություն, գիտելիք (քաղաքական), վստահություն, բավարարվածություն, մասնակցություն, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Արդյունքներ

Վերևում ներկայացված տվյալների առաջին բազայի շուրջ իրականացրել ենք մի շարք վերլուծություններ՝ համայնքային ծառայություններից բնակիչների գոհունակությունը գնահատելու համար: Ստորև ներկայացվող աղյուսակում (Տես Աղյուսակ 1) ցուցադրվում է, թե ինչպես է տարին ազդում համայնքային ծառայություններից բնակիչների գոհունակության վրա:

Աղյուսակ 1. Ծառայությունների նկատմամբ բնակիչների գոհունակությունը խոշորացված և չխոշորացված համայնքներում

Փոփոխական	t-test արդյունք
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Համայնքի մաքրության պահպանում	t (1233) = -4.714, p = .00, միջինների տարբերությունը = -.326
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Կրթության, մշակույթի, սպորտի բնագավառների կազմակերպությունների կառավարում	t (1100) = -3.155, p = .002, միջինների տարբերությունը = -.198
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Սննդի կետերում առողջապահ. չափորոշիչների պահպանման վերահսկողություն	t (985) = -2.596, p = .01, միջինների տարբերությունը = -.182
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Օրենքի և կարգի պահպանում	t (761) = -3.960, p = .00, միջինների տարբերությունը = -.284

Այս աղյուսակի արդյունքներից կարելի է արձանագրել, որ խոշորացումից հետո համայնքների կողմից այս ծառայությունների տրամադրումից գոհունակությունը նկատելիորեն նվազել է հարցված քաղաքացիների շրջանում:

Վերոհիշյալ 44 համայնքների հետ իրականացվել են այլ վերլուծություններ ևս՝ ցույց տալու համար, թե ինչպես է համայնքի չափսը և բնակչության թիվն ազդում համայնքի կողմից մատուցվող ծառայություններից բավարարվածության վրա: Ստորև աղյուսակները ցույց են տալիս, որ 2015 թվականին, համայնքի չափսի ազդեցությունը ծառայություններից բավարարվածության վրա նշանակալի չէ, սակայն 2019 թվականի արդյունքները նշանակալի են: Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ համայնքի չափսի ազդեցության բացատրելիությունը նկատելիորեն աճել է չորս տարիների ընթացքում՝ 10.5%-ից հասնելով 16.3%-ի:

Աղյուսակ 2. Համայնքի չափի ազդեցությունը ծառայություններից բավարարվածության վրա, 2015 թ.

Բազմաչափ թեստեր[a]

Ազդեցություն		Արժեք	Ֆունկցիա	Հիպոթեզի ազատության աստիճան	Սխալի ազատության աստիճան	Նշանակալիություն	Մասնակի էտայի քառակուսի
Intercept	Pillai's Trace	.918	119.568b	18.000	641.000	.000	.918
	Wilks' Lambda	.082	119.568b	18.000	641.000	.000	.918
	Hotelling's Trace	11.209	119.568b	18.000	641.000	.000	.918
	Roy's Largest Root	11.209	119.568b	18.000	641.000	.000	.918
Չափ	Pillai's Trace	.517	1.255	90.000	980.000	.000	.103
	Wilks' Lambda	.575	1.258	90.000	935.958	.000	.105
	Hotelling's Trace	.596	1.260	90.000	952.000	.000	.106
	Roy's Largest Root	.210	2.292c	90.000	196.000	.000	.174

a. Դիզայն՝ Intercept + չափ

b. Ճշգրիտ վիճակագրական

c. Վիճակագրականը F-ի վերին շեմն է, որը նշում է նշանակալիության մակարդակի ստորին շեմը

d. Հաշվարկվել է ՝ հիմք ընդունելով, որ ալֆան = .05

Աղյուսակ 3. Համայնքի չափի ազդեցությունը ծառայություններից բավարարվածության վրա, 2019 թ.

Բազմաչափ թեստեր[a]

Ազդեցություն		Արժեք	Ֆունկցիա	Հիպոթեզի ազատության աստիճան	Սխալի ազատության աստիճան	Նշանակալիություն	Մասնակի էտայի քառակուսի
Intercept	Pillai's Trace	.953	159.804[b]	18.000	143.000	.000	.953
	Wilks' Lambda	.047	159.804[b]	18.000	143.000	.000	.953
	Hotelling's Trace	20.115	159.804[b]	18.000	143.000	.000	.953
	Roy's Largest Root	20.115	159.804[b]	18.000	143.000	.000	.953
Չափ	Pillai's Trace	.97	1.550	90.000	735.000	.001	.159
	Wilks' Lambda	.410	1.563	90.000	698.245	.001	.163
	Hotelling's Trace	1.002	1.574	90.000	707.000	.001	.167
	Roy's Largest Root	.406	3.319[c]	90.000	147.000	.000	.289

a. Դիզայն՝ Intercept + չափ

b. Ճշգրիտ վիճակագրական

c. Վիճակագրականը F-ի վերին շեմն է, որը նշում է նշանակալիության մակարդակի ստորին շեմը

d. Հաշվարկվել է ՝ հիմք ընդունելով, որ ալֆան = .05

Տեղական ժողովրդավարության չափման համար իրականացված վերլուծությունները ցույց են տալիս, որ համաթվի բոլոր յոթ ենթախմբերի դեպքում (սոցիալական ինտեգրում, հետաքրքրվածություն, գիտելիք (քաղաքական), վստահություն, բավարարվածություն, մասնակցություն, թափանցիկություն և հաշվետվողականություն) իրավիճակը նկատելիորեն ավելի դրական է գնահատվում չխոշորացված համայնքներում ՝ ի համեմատություն խոշորացված համայնքների և խոշոր քաղաքների, և գյուղական համայնքներում՝ ի համեմատություն քաղաքային համայնքների և Երևանի: Սակայն գրեթե բոլոր ենթախմբերի արդյունքների բացատրական ունակությունը շատ ցածր է եղել, ինչն այս պահին թույլ չի տալիս հիմնվել դրանց վրա:

Համառոտ ամփոփում

Հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է պնդել, որ խոշորացված համայնքներում տեղի է ունեցել մատուցվող ծառայություններից բավարարվածության նկատելի անկում: Արդյունքները նաև ցույց են տալիս, որ չխոշորացված համայնքներում ծառայությունների մատուցման որակից միջին բավարարվածությունն ավելի բարձր է եղել բոլոր հետազոտված ծառայությունների դեպքում: Ակնհայտ են նաև դրական միտումները չխոշորացված հա-

մայնքների և բացասական միտումները՝ խոշորացվածների դեպքում:

Տեղական ժողովրդավարության տեսանկյունից կարելի է արձանագրել, որ լավագույն իրավիճակը չխոշորացված գյուղական համայնքներում է: Սակայն այս պնդումներին պետք է մի փոքր զգուշորեն մոտենալ, քանի որ ստեղծված մոդելը վիճակագրական տեսանկյունից շատ հզոր չէ և չի կարողանում ամբողջությամբ բացատրել առկա իրավիճակը:

Առաջարկներ որոշում կայացնողների համար

- Իրականացնել խոշորացված համայնքներում տրամադրվող ծառայությունների մատուցման որակի և տեղական ժողովրդավարության համապարփակ գնահատում:
- Խրախուսել արդեն իսկ խոշորացված համայնքներում խոշորացման գործընթացի շարունակականությունը՝ այդպիսի համայնքներին տրամադրելով հավելյալ լիազորություններ և ինքնավարություն:
- Ընդլայնել համայնքի ՏԻՄ-երի լիազորությունները, որով հիմքեր կստեղծվեն համայնքի կարողությունների զարգացման համար, կխթանվի ժողովրդավարական ապակենտրոնացումը և կապահովվի տարածքային համաչափ զարգացում:
- Ակտիվորեն համագործակցել համայնքային դպրոցների, մարզպետարանների և ԿԳՄՍ նախարարության հետ, ինչպես նաև համապատասխան փոփոխություններ կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 11 և 16-ում՝ նախաձեռնելով ավագ դպրոցների աշակերտների պարբերական մասնակցություն ավագանու նիստերին և համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվող քննարկումներին, և խրախուսելով անչափահաս բնակիչների կողմից ավագանու նիստերին և համայնքի ղեկավարին առաջարկություններ ներկայացնելը:
- Ստեղծել հնարավորություններ մինչև 5000 բնակիչ ունեցող համայնքներում ուղիղ ժողովրդավարության, իսկ մինչև 50000 բնակիչ ունեցողներում՝ խորհրդակցական ժողովրդավարության (deliberative democracy) ատրիբուտների կիրառման համար՝ օրենքում ամրագրելով նման մեխանիզմներով որոշումների ընդունման քվոտաներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Athanassopoulos, A.D. (1998), Decision Support for Target-Based Resource Allocation of Public Services in Multiunit andMultilevel Systems. *Management Science*. Vol. 44, No. 2, pp. 173-187.

2. Bel, G. (2006), Un Analisis de Los Gastos Municipales por el Servicio de Residuos Solidos Urbanos. *Revista de Economia Aplicada*. Vol. 14, pp. 5-32.

3. Denters, B., Goldsmith, M., Ladner, A., Mouritzen, P.E.; and Rose, L.E. (2014). *Size and Local Democracy*. Northampton, MA: Edward Elga.

4. Drake, L.; and Simper, R. (2003), The Measurement of English and Welsh Police Force Efficiency: A Comparison of Distance Function Models. *European Journal of Operational Research*. Vol. 147, pp. 165–186.

5. Gimenez, V.C.; and Prior, D. (2007), Long- and Short-Term Cost Efficiency Frontier Evaluation: Evaluation from Spanish Local Governments. *Fiscal Studies*. Vol. 28, No. 1, pp. 121-139.

6. Karlaftis, M. (2004), A DEA Approach for Evaluating the Efficiency and Effectiveness of Urban Transit Systems. *European Journal of Operational Research*. Vol. 152, pp. 354–364.

7. Ladner, A. (2002), Size and Direct Democracy at the Local Level: The Case. *Environment and Planning C: Government and Policy*, pp. 813- 828.

8. Tupper, H.C.; and Resende, M. (2004), Efficiency and Regulatory Issues in the Brazilian Water and Sewage Sector: An Empirical Study. *Utility Policy*. Vol. 12 No. 1, pp. 29–40.

9. Worthington, A.C.; and Dollery, B.E. (2001), Measuring Efficiency in Local Government: An Analysis of New South Wales Municipalities' Domestic Waste Management Function. *Policy Studies Journal*. Vol. 29, No. 2, pp. 232-249.

ՍՈՆՅԱ ՄՍՐՅԱՆ.

ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՏԻՄ-ԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԳՈՐԾՈՆ

Ներածություն

Հայաստանում կառավարման մեջ հանրային մասնակցության մոդելը ներդրվել է նախորդ երկու տասնամյակների ընթացքում: ՏԻ-անը հանրային մասնակցության ընդլայնումը ներկայումս զարգացման նախաձեռնությունների և կառավարական գործիքների թիրախում է՝ որպես «ավելի լավ» կառավարման հասնելու միջոց: Այսպիսի նախաձեռնությունները հիմնականում հիմնվում են այն ենթադրության վրա, որ հանրությունը պատրաստ է և դրական է վերաբերվում մասնակցությանը: Միևնույն ժամանակ, այսպիսի նախաձեռնությունները հանրային ներգրավվածության խթանման և դրական փորձի հիման վրա փորձում են ընդլայնել հանրային մասնակցության ձևերը և ծավալները, ինչպես նաև բարձրացնել քաղաքացիների իրազեկվածությունը ՏԻ ոլորտի վերաբերյալ: Այս համատեքստում կարևոր է դառնում ուսումնասիրել, թե ինչպիսի իրազեկվածություն ունի հասարակությունը ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ և ինչպիսին է նրանց մասնակցությունը ՏԻ-անը: Միևնույն ժամանակ կարևոր է դառնում նաև հասկանալ, թե ինչպես է ՏԻՄ-երի նկատմամբ վստահությունը փոխկապված ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ իրազեկվածության և ՏԻ-անը՝ քաղաքացիների մասնակցության հետ:

«Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում ՀՌԿԿ-Հայաստանի կողմից 2015 և 2019 թվականներին իրականացվել է տնային տնտեսությունների հետազոտություն, որի նպատակն է եղել ի թիվս այլ խնդիրների բացահայտել ՀՀ քաղաքացիների վերաբերմունքն իրենց համայնքների ՏԻՄ-երի աշխատանքի նկատմամբ: Այս ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել է ՀՌԿԿ Հայաստանի կողմից իրականացված հետազոտությունների երկու տվյալների բազան՝ 2015 և 2019 թվականների համար: Ուսումնասիրության շրջանակներում կառուցվել է ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության չափման համաթիվ: Երկու փոփոխականների՝ ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության և ՏԻ-անը քաղաքացիների մասնակցության փոփոխականների միջոցով իրականացվել է կլաստերային վերլուծություն: Կառուցվել է մոդերացիոն մոդել, որում այս երկու փոփոխականների հետ միասին դիտարկվել է նաև ՏԻՄ-երի նկատմամբ վստահության գործոնը՝ որպես մոդերատոր փոփոխական:

Արդյունքում բացահայտվել է, որ 2015 թվականին բնակչության գերակշիռ մասը մեկուսացած է եղել ՏԻ ոլորտից՝ ունենալով ՏԻՄ-երի վերաբերյալ ցածր գիտելիքներ: 2019 թվականին 2015 թվականի համեմատ բարձրացել է ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածությունը, սակայն միևնույն ժամանակ նվազել է մասնակցությունը ՏԻ-անը: Մոդերացիոն վերլուծության արդյունքում պարզվել է, որ ՏԻՄ-երի վերաբերյալ իրազեկվածությունը դրականորեն է կապված ՏԻՄ-երի նկատմամբ վստահության հետ, սակայն 2015 թվականի համեմատ 2019 թվականին ՏԻՄ-երի վերաբերյալ իրազեկվածության աճը առավել թույլ է ազդել վստահության աճի վրա: ՏԻ-անը քաղաքացիների մասնակցությունը հնարավոր չի եղել բացատրել ՏԻՄ-երի նկատմամբ վստահությամբ՝ որպես միջանկյալ փոփոխական:

Նպատակ եվ հիպոթեզներ

Ուսումնասիրության առաջնային նպատակն է պարզել, թե ինչպիսին է հասարակության կազմն ըստ երկու չափումների՝ ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածության մակարդակ և մասնակցություն ՏԻ-անը: Հետազոտության երկրորդային նպատակն է պարզել, թե ինչպես են այս երկու գործոնները փոխկապված միմյանց, այն դեպքում, երբ վստահության գործոնը դիտարկում ենք որպես միջանկյալ փոփոխական:

Այսպիսով, առաջ են քաշվել հետևյալ հետազոտական հարցերը՝

- Ելնելով առկա դիտարկվող փոփոխականներից, ինչպե՞ս է հնարավոր չափել ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածությունը և մասնակցությունը ՏԻ-անը:
- Ինչպիսի՞ն է հասարակության կազմն՝ ըստ ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածության և ՏԻ-անը մասնակցությամբ:
- Ինչպե՞ս է փոփոխվել հասարակության կազմն՝ ըստ ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածության և ՏԻ-անը մասնակցության 2019 թվականին՝ 2015 թվականի նկատմամբ:
- Ինչպե՞ս են ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածությունը և ՏԻ-անը մասնակցությունը փոխկապված միմյանց, այն դեպքում, երբ ՏԻՄ-երի նկատմամբ վստահության գործոնը դիտարկում ենք որպես միջանկյալ փոփոխական:

ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածության եվ ՏԻ-անը մասնակցության չափումը

ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածության ինդեքսի կառուցման համար ագրեգացվել են երկու միջանկյալ բաղադրյալ համաթվեր, որոնցից յուրաքանչյուրում փոփոխականներն ագրեգացվել են ըստ գործոնային ծանրաբեռվածությունների (Հավելված 1):

Միջանկյալ բաղադրյալ համաթվի կառուցման համար կիրառվել է հետևյալ բանաձևը՝

$$ICI = \sum_{j=1}^{k} \omega j \, Xji \ ,$$

որտեղ ωj–ն յուրաքանչյուր j-երդ փոփոխականի գործոնային ծանրաբեռնվածությունն է, Xji–ն տվյալ համաթվի մեջ ագրեգացվող փոփոխականը, k-ն փոփոխականների թիվն է:

ՏԻՄ-երի իրազեկվածության համաթվի կառուցման համար միջանկյալ ենթահամաթվերը ագրեգացվել են մեկ համաթվի մեջ համաձայն հետևյալ բանաձևի՝

$$CI = \frac{Var\,(F1)}{Var\,(F1)+Var\,(F2)} * ICI(1) + \frac{Var\,(F2)}{Var\,(F1)+Var\,(F2)} ICI(2),$$

որտեղ յուրաքանչյուր գործոնին տրված կշիռները հետևյալ են՝

$$CI = 0.55*ICI(1) + 0.449*ICI(2),$$

որտեղ կշիռները հաշվարկվել են ըստ բացատրողական գործոնային վերլուծության՝ հաշվարկելով յուրաքանչյուր գործոնի վարիացիայի բացատրման ցուցանիշների (Հավելված 2)

Բանաձևերի կիրառության արդյունքում դուրս է բերվել ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածության վերջնական համաթիվը, որը տատանվում է [0 – 3.02] միջակայքում և ունի հետևյալ բնութագրիչները՝ միջին (2015թ) = 0.8988, ստանդարտ շեղում (2015թ) = 0.6008, միջին (2019թ) = 1.0418, ստանդարտ շեղում (2019թ) = 0.492:



Գծապատկեր 1. ՏԻՄ-երի վերաբերյալ իրազեկվածության համաթվի պարամետրերը 2015 թվականի համար



Գծապատկեր 2. ՏԻՄ-երի վերաբերյալ իրազեկվածության համաթվի պարամետրերը 2019 թվականի համար

Տվյալների բազայի վերլուծությունը ցույց է տվել, որ հնարավոր չէ կառուցել ՏԻ-անը քաղաքացիների մասնակցության արդյունավետ մեկ համաթիվ, քանի որ ներքին հուսալիության (Կրոնբախի ալֆա) գործակիցը տարբեր փոփոխականների համակցությամբ ստացվել է բավականին ցածր: Արդյունքում, ընտրվել է մեկ փոփոխական՝ «վերջին վեց ամիսների ընթացքում որքան հաճախ եք մասնակցել համայնքի ավագանու նիստերին», որը ներկայացնում է ՏԻ-անը բնակչության մասնակցությունը: ՏԻՄ-երի նկատմամբ վստահության ներկայացման համար ընտրվել է մեկ փոփոխական՝ «որքա՞ն եք վստահում Ձեր համայնքի ղեկավարին»:

Կլաստերային վերլուծության սխեման

ՏԻ-անը մասնակցության և ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածության չափումների զատորոշման հիմնական նպատակն այս երկու չափումների՝ մեկ վերլուծական սխեմայում կիրառությունն է, որի միջոցով փորձ է կատարվել դուրս բերել հասարակության կազմը: Այս երկու չափումների միջոցով կառուցվել է պարզ մատրիցա, որով հնարավոր է դառնում բնութագրել չորս «իդեալական տիպի» կլաստերներ (Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածության և ՏԻ-անը մասնակցության միջոցով կառուցված իդեալական տիպերը



Որպես իդեալական տիպեր ներկայացվում են տարանջատման հետևյալ չորս հիպոթետիկ խմբերը՝

Կլաստեր 1 - «Մեկուսացած քաղաքացիներ»: Այս խմբի ներկայացուցիչներն ունեն ՏԻՄ-երի նկատմամբ ցածր գիտելիքներ և ցածր մասնակցություն ՏԻ-անը: Այս խմբի ներկայացուցիչները չեն մասնակցում ՏԻ-ան գործընթացներին և մեկուսացած են այս գործընթացներից:

Կլաստեր 2 - «Ձևական մասնակցություն»: Այս խմբի ներկայացուցիչներն ունեն ՏԻՄ-երի նկատմամբ ցածր իրազեկվածություն, սակայն նրանց մասնակցությունը ՏԻ-անը բարձր է: Նրանց մասնակցությունը ՏԻ-անը կրում է ձևական բնույթ, քանի որ այս խմբի ներկայացուցիչները չունեն բավարար գիտելիքներ ՏԻ-ան գործընթացների վրա ազդեցություն ունենալու համար:

Կլաստեր 3 - «Չիրացված գիտելիքներ»: Այս խմբի ներկայացուցիչներն ունեն ՏԻՄ-երի նկատմամբ բարձր իրազեկվածություն, սակայն չեն մասնակցում ՏԻ-ան գործընթացներին: Թերևս, այս խմբի դեպքում առկա է գիտելիք ՏԻ-ան վերաբերյալ, որը սակայն մնում է «չիրացված», քանի որ փաստացի այս խմբի ներկայացուցիչները ՏԻ-ան գործընթացների վրա չունեն ազդեցություն:

Կլաստեր 4 - «Գիտակցված մասնակցություն»: Այս խմբի ներկայացուցիչները և՛ ունեն բավարար գիտելիքներ ՏԻՄ-երի վերաբերյալ, և՛ մասնակցում են այս գործընթացներին: Թերևս, այս խմբի ներկայացուցիչները ՏԻ-անը մասնակցող ակտիվ խմբի ներկայացուցիչներն են, որոնց մասնակցությունը հիմնվում է ՏԻ-ան վերաբերյալ որոշակի գիտելիքների պաշարի վրա:

Կլաստերային վերլուծություն, 2015 թ.

Կլաստերային վերլուծությունում ներգրավվել են երկու փոփոխականներ՝ հանրային իրազեկվածությունը ՏԻ-ան նկատմամբ և վերջին վեց ամիսների ընթացքում համայնքի ավագանու նիստերին քաղաքացիների մասնակցության հաճախությունը: Ելնելով այս երկու փոփոխականների տիպերից[16], կիրառվել է երկքայլ կլաստերային վերլուծության մեթոդը[17]: Այս մեթոդն արդյունավետ է այն առումով, որ նրա միջոցով հնարավոր է ինքնուրույն դուրս բերել կլաստերների արդյունավետ քանակ:

Համաձայն 2015 թվականի տվյալների՝ երկքայլ կլաստերային վերլուծության արդյունքում բացահայտվել են հասարակության երեք խմբեր[18] (Գծապատկեր 4): Այս խմբերից ամենամեծը **«մեկուսացած քաղաքացիների»** խումբն է, որը կազմել է հարցվածների **57%-ը**: Այս խմբի ներկայացուցիչներն ունեն ՏԻ-ան վերաբերյալ ցածր գիտելիքներ (ՏԻ իրազեկվածության միջին միավոր = 0.48 առավելագույն 3.03-ից), իսկ համայնքի ավագանու նիստերին նրանք վերջին վեց ամիսների ընթացքում երբեք չեն մասնակցել: Ըստ մեծության երկրորդ խումբը **«Չիրացված գիտելիքների» խումբն է**, որի ներկայացուցիչներն ունեն որոշակի գիտելիքներ ՏԻ-ան վերաբերյալ (ՏԻ իրազեկվածության միջին միավոր = 1.42 առավելագույն 3.03-ից), սակայն վերջիններս նույնպես չեն մասնակցում ՏԻ-անը: Այս խումբը կազմել է բնակչության **40.5%-ը**:

Բնակչության առավել փոքր խումբ կազմում են **«Գիտակցված մասնակցություն»** (ՏԻ իրազեկվածության միջին միավոր = 2.09 առավելագույն 3.03-ից) խումբը՝ **բնակչության 2.4%-ը:** Այս խմբի ներկայացուցիչները վերջին վեց ամիսների ընթացքում **«գրեթե միշտ»** մասնակցել են համայնքի ավագանու նիստերին:

[16] Ենթադրվում է, որ փոփոխականներն անկախ են (2015թ. բազայում՝ Kendall's tau = 0.187, Sig. (2-tailed)=0.000, Spearman's coefficient = 0.223, Sig. (2-tailed) = 0.000)

[17] Կիրառվել է Schwarz's Bayesian Criteria (BIC) և log-likelihood distance measure technique

[18] Կլաստերի որակը գնահատվել է «լավ», միջին Silhouette = 0.6

Գծապատկեր 4. ՏԻ վերաբերյալ իրազեկվածության և ՏԻ-անը քաղաքացիների մասնակցության հիման վրա առանձնացված կլաստերներն՝ ըստ խմբերի մեծությունների, 2019թ.



Կլաստերային վերլուծություն, 2019 թ.

2019 թվականի տվյալների բազայում իրականացված կլաստերային վերլուծության արդյունքում՝ հիմնվելով նույն մեթոդի վրա, ինչ և 2015 թվականի դեպքում էր, բացահայտվել են չորս խմբեր (Գծապատկեր 5): Առանձնացվել են ըստ մեծության երկու գրեթե հավասար խմբեր՝ **«Մեկուսացած քաղաքացիներ»**, որը կազմում է բնակչության **35.8%-ը** (ՏԻ իրազեկվածության միջին միավոր = 0.53 առավելագույն 3.03-ից) և **«բարելավված իրազեկվածություն»**, որը կազմում է բնակչության **36.8%-ը** (ՏԻ իրազեկվածության միջին միավոր = 1.08 առավելագույն 3.03-ից): Այս երկու խմբերի ներկայացուցիչներն էլ չեն մասնակցում ՏԻ-անը, սակայն երկրորդ խմբի ներկայացուցիչներն առաջին խմբի համեմատ ունեն ՏԻ վերաբերյալ որոշակի գիտելիքներ, ինչը որոշակի դրական տեղաշարժ է 2015 թվականի տվյալների բազայի համեմատ:

Ըստ մեծության, երրորդ խումբը **«Չիրացված գիտելիքների»** խումբն է, որը կազմում է բնակչության **25.6%-ը** (ՏԻ իրազեկվածության միջին միավոր = 1.64 առավելագույն 3.03-ից): Այս խմբի ներկայացուցիչներն ունեն ՏԻ վերաբերյալ բարձր գիտելիքներ, սակայն նույնպես չեն մասնակցում ՏԻ-անը: Հարցվածների մեջ ամենափոքր խումբը կազմում է **«Գիտակցված մասնակցության»** խումբը՝ ընդամենը **1.8%:** Այս խմբի ներկայացուցիչներն ունեն ՏԻ վերաբերյալ բարձր իրազեկվածություն և վերջին վեց ամիսների ընթացքում մասնակցել են ավագանու նիստերին (ՏԻ իրազեկվածության միջին միավոր = 1.83 առավելագույն 3.03-ից): Ընդ որում, 2015 թվականի համեմատ այս խմբի ծավալը փոքրացել է, որի պատճառը ՏԻ-անը բնակչության մասնակցության նվազումն է:

Գծապատկեր 5. ՏԻ վերաբերյալ իրազեկվածության և ՏԻ-անը քաղաքացիների մասնակցության հիման վրա առանձնացված կլաստերներն՝ ըստ խմբերի մեծությունների, 2019թ.



ՏԻ-ան վերաբերյալ իրազեկվածության աճը չի հանգեցրել մասնակցության աճի

Որպեսզի պարզենք, թե արդյոք 2015 թվականի համեմատ 2019 թվականին փոխվել է բնակչության իրազեկվածությունը ՏԻ-ան վերաբերյալ, կիրառվել է Մանն-Ուիթնիի ոչ պարամետրիկ թեստը[19] (Հավելված 3): Կիրառված թեստը ցույց է տվել, որ առկա է վիճակագրորեն նշանակալի տարբերություն 2015 թվականի նկատմաբ (Asymp. Sig. (2-tailed)=.000), այսինքն, ՏԻ վերաբերյալ իրազեկվածությունն աճել է 2019 թվականին 2015 թվականի համեմատ (միջին գնահատական (2015)=0.8988, միջին գնահատական (2019)=1.0418):

Սակայն, ինչպես տեսնում ենք կլաստերային վերլուծության միջոցով, իրազեկվածության աճը չի հանգեցրել մասնակցության աճի (2.45% գիտակցված մասնակցություն ՏԻ-անը 2015 թվականին՝ 2019 թվականի 1.8%-ի համեմատ) և «գիտակցված մասնակցություն» ունեցող խմբի ծավալը փաստացի նվազել է:

[19] One-Sample Kolmogorov-Smirnov Test-ի արդյունքում բացահայտվել է, որ փոփոխականը չի ենթարկվում նորմալ բաշխման (Asymp. Sig. (2-tailed) = .000)

Վստահությունը որպես միջանկյալ փոփոխական

Ուսումնասիրության այս փուլում իրականացվել է մեդիացիոն վերլուծությունը, որտեղ որպես անկախ/բացատրող փոփոխական է դիտարկվել ՏԻ վերաբերյալ իրազեկվածության համաթիվը, կախյալ/բացատրվող փոփոխական՝ մասնակցությունը ՏԻ-անը, իսկ ՏԻՄ-երի նկատմամբ վստահությունը՝ որպես մեդիատոր/միջանկյալ փոփոխական[20] (Գծապատկեր 6): Վերլուծությունն իրականացվել է 2015 և 2019 թվականների տվյալների բազաների հիման վրա առանձին-առանձին:

Գծապատկեր 6. Մեդիացիոն վերլուծությունում կիրառված մոդելը և արդյունքները



Կիրառված մեդիացիոն վերլուծության արդյունքում ստացվել են վիճակագրորեն նշանակալի մոդելներ և՛ 2015 թվականի (Հավելված 1), և՛ 2019 թվականի բազաների հիման վրա (Հավելված 2) ($p<0.000$):

Ընդհանուր առմամբ կիրառված մեթոդի արդյունքում արված եզրակացությունները ներկայացված են ստորև՝

[20] Կիրառվել է՝ «Hayes Process» մակրոն SPSS վերլուծական ծրագրով, (Process Model 4)

- ՏԻՄ-երի նկատմամբ վստահության վրա ազդում է ՏԻ վերաբերյալ իրազեկվածությունը: Այս երկու փոփոխականների միջև առկա է վիճակագրորեն նշանակալի դրական կապ (p<0.000), սակայն 2019 թվականին (b=0.9351, s.e.= .0849, p<0.000,) 2015 թվականի համեմատ (b=1.418, s.e.=.0737, p<0.000) նվազել է ՏԻ վերաբերյալ իրազեկվածության ազդեցության չափը ՏԻՄ-երի նկատմամբ վստահության վրա: Սա նշանակում է, որ որոշակի պահից սկսած՝ ՏԻ վերաբերյալ իրազեկվածության ավելացումը առավել քիչ չափով է բարձրացրել ՏԻՄ-երի նկատմամբ վստահությունը:
- ՏԻ վերաբերյալ իրազեկվածության և ՏԻ-անը մասնակցության միջև առկա է վիճակագրորեն նշանակալի դրական կապ, սակայն 2019 թվականին (b=0.1364, s.e.= .0177, p<0.000) 2015 թվականի համեմատ (b=0.2792, s.e.= .0231, p<0.000) այս կապը թուլացել է, ինչը նշանակում է, որ քաղաքացիները թեև դառնում են առավել իրազեկված ՏԻ ոլորտի վերաբերյալ, սակայն առավել պակաս չափով են ցանկանում դառնալ այս գործընթացների մասը:
- ՏԻՄ-երի նկատմամբ վստահության և ՏԻ-անը մասնակցության մեջ հնարավոր չի եղել բացահայտել վիճակագրորեն նշանակալի կապեր ո՛չ 2015 թվականի բազայի հիման վրա (p=.6347), ո՛չ 2019 թվականի բազայի հիման վրա (p=.2671): Սա թերևս նշանակում է, որ բավարար ապացույցներ չկան պնդելու, որ ՏԻՄ-երի նկատմամբ վստահությունը որոշիչ գործոն է ՏԻ-անը քաղաքացիների մասնակցության համար:

Առաջարկություններ

Ելնելով ուսումնասիրության արդյունքներից, ներկայացվող առաջարկությունները հետևյալներն են՝

Քաղաքականության առաջարկություններ՝

- Բարձրացնել ՏԻ ոլորտի վերաբերյալ իրազեկվածությունը **«մեկուսացած քաղաքացիների»** խմբի շրջանում, որը կազմում է բնակչության 35.8%-ը (2019 թ.):
- Իրականացնել ՏԻ-անը մասնակցության խթանման միջոցառումներ **«Չիրացված գիտելիքների»** խմբի շրջանում, որը կազմում է բնակչության 25.6%-ը (2019թ.):
- Իրականացվող իրազեկվածության միջոցառումներում ներդնել ՏԻ ոլորտի նկատմամբ բնակչության վստահության բարձրացմանը նպաստող բաղադրիչներ:

Ոլորտային հետազոտողներին առաջարկվում է՝

- Ուսումնասիրել ՏԻ-անը բնակչության մասնակցության վրա ազդող գործոնները՝ կիրառելով բազմակի մեդիացիոն վերլուծության մոդելներ:
- Ուսումնասիրել ՏԻ-ան նկատմամբ բնակչության վստահությունը փոխպայմանավորող գործոնները՝ կիրառելով բազմակի մեդիացիոն վերլուծության մոդելներ:
- Որակական մեթոդների կիրառությամբ ուսումնասիրել, թե ինչպես և ինչ գործոններով են ՏԻ-ան վերաբերյալ իրազեկվածությունը փոխկապված ՏԻ-անը բնակչության մասնակցության հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԻՄ-ԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎԱԾ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐՆ ԸՍՏ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Փոփոխականներ	Բաղադրիչներ	
	Գործոն 1	Գործոն 2
X1_Ճանաչո՞ւմ եք արդյոք Ձեր համայնքի ղեկավարին	-.083	.808
X3_Ձեր համայնքի ղեկավարն ունի՞ իրեն կից խորհրդակցական մարմին(ներ):	.175	.405
X2_Ճանաչո՞ւմ եք արդյոք Ձեր համայնքի ավագանու անդամներին:	.082	.788
X5_Գիտե՞ք արդյոք՝ ուր են ՏԻՄ-երն ուղղում տեղական հարկերից, տուրքերից, վճարներից, տույժ-տուգանքներից ստացված եկամուտները:	.682	.186
X9_Գիտե՞ք արդյոք կառավարության կողմից ՏԻՄ-երի գործունեության գնահատման որևէ գործիք:	.692	.066
X8_Ծանո՞թ եք արդյոք Ձեր ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումներին:	.610	.351
X7_Տեղյա՞կ եք ՏԻՄ-երի հաշվետվողականության վերաբերյալ օրենքի մասին:	.611	.166
X4_Գիտե՞ք արդյոք Ձեր համայնքի բյուջեի չափը:	.574	.058
X10_Գիտե՞ք, թե ՏԻՄ-երի կողմից ինչպես են սահմանվում տեղական հարկերի, տուրքերի, վճարների, տույժ-տուգանքների դրույքաչափերը:	.466	.006
X6_Արդյոք տեղյա՞կ եք համայնքների խոշորացման գործընթացի մասին:	.245	.529

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՏԻՄ-ԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բաղադրիչ	Նախնական սեփական արժեք			Քառակուսի բարձրացված կշիռների շրջված գումարներ		
	Ընդամենը	% վարիացիա	Կումուլատիվ %	Ընդամենը	% վարիացիա	Կումուլատիվ %
1	2.879	28.794	28.794	2.340	23.398 (Var F1)	23.398
2	1.372	13.719	42.513	1.911	19.114 (Var F2)	42.513
3	.953	9.528	52.040			
4	.909	9.087	61.128			
5	.795	7.954	69.081			
6	.711	7.112	76.193			
7	.656	6.563	82.756			
8	.630	6.299	89.054			
9	.575	5.753	94.808			
10	.519	5.192	100.000			

ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՄԱՆՆ-ՈՒԻԹՆԻ ՈՉ ՊԱՐԱՄԵՏՐԻԿ ԹԵՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹՎԻ ՀԱՄԱՐ

Ռանգեր				
	Տարի	N	Միջին ռանգ	Ռանգերի գումար
Իրազեկվածության համաթիվ	2015	1443	1307.88	1887273.50
	2019	1408	1547.05	2178252.50
	Ընդամենը	2851		

Տեստի վիճակագրություն	
	Իրազեկվածության համաթիվ
Mann-Whitney U	845427.500
Wilcoxon W	1887273.500
Z	-7.774
Asymp. Sig. (2-tailed)	.000
Խմբավորող փոփոխական՝ Տարի	

ԶԱՐՈՒՀԻ ՍԻՄՈՆՅԱՆ.

ՏԻՄ-ԵՐԻ 2015-2019. ԽՆԴԻՐՆԵՐ, ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտական հարցեր

- բացահայտել, թե յուրաքանչյուր մարզում և համայնքում ո՞ր խնդիրներին են ՏԻՄ-երը արագ արձագանքում և ո՞ր խնդիրներին՝ դանդաղ,
- բացահայտել, թե յուրաքանչյուր մարզում և համայնքում ՏԻՄ-երը ո՞ր բնագավառում են առավել թափանցիկ աշխատում, և որոնցու՞մ՝ հակառակը, և
- բացահայտել, թե յուրաքանչյուր մարզում քաղաքացիները ՏԻՄ-երի հետ խնդիրները ի՞նչ ճանապարհներով են լուծում:

Մեթոդ

Հետազոտական հարցերի պատասխանները ստանալու համար կիրառվել է χ^2 ստանդարտացված մնացորդների վերլուծություն: Եթե χ^2 ցույց է տալիս՝ արդյո՞ք փոփոխականների մեջ կապ կա, թե ոչ, ապա χ^2 ստանդարտացված մնացորդները հնարավորություն են տալիս մեկ քայլ առաջ գնալ և բացահայտել, թե կապը ո՞ր կատեգորիաների մեջ է կենտրոնացած: «ՀաՄաՏեղ» ծրագրի շրջանակներում իրականացված հարցման ժամանակ հարցվողները պատասխանել են, թե որքանո՞վ լավ կամ վատ են ՏԻՄ-երը իրականացնում, օրինակ, համայնքի մաքրությունը, ճանապարհների պահպանումը, տարբեր կառույցների կառավարումը և այլն:

Հարցվողները գնահատել են ՏԻՄ-երի աշխատանքը 5 բալանոց սանդղակով, որտեղ 0-ն նշանակում է, որ ամենևին չեն իրականացնում այդ գործառույթները, իսկ 5-ը՝ շատ լավ են իրականացնում:

χ^2 մնացորդների վերլուծությունը իրականացվում է հաճախականությունների աղյուսակի (crosstab) վրա: Աղյուսակի վանդակներում հարցվողների քանակն է, ովքեր պատասխանել են, որ այդ գործառույթը իրենց համայնքի/մարզի ՏԻՄ-երը լավ կամ շատ լավ են իրականացնում (top 2): Մեթոդը համապատասխան բանաձևի օգնությամբ հաշվարկում է, թե ինչքան կլիներ նրա արժեքը, եթե սյունակի և տողի մեջ կապ չլիներ (expected value): Այնուհետև մեթոդը հաշվում է վանդակի դիտարկվող (observed value) և սպասվող արժեքների (expected value) տարբերությունը և ստանդարտացնում մնացորդները: Եթե մնացորդի մոդուլը մեծ է 1,96 –ից, ապա 95 տոկոս հավանականությամբ այդ վանդակի սյան և տողի մեջ առկա է կապ:

Համայնքի ՏԻՄ-երը կարող են ըստ այս աղյուսակների գնահատել, թե ո՞ր համայնքում ո՞ր ծառայության մատուցումն է հաջողվել, և ո՞րը ձախողվել: Այսպիսով, հնարավորություն է ստեղծվում հասկանալ ՏԻՄ-երի թույլ կողմերը և նրանց ջանքերը ուղղել դրանք հաղթահարելու ուղղությամբ:

Եթե վանդակը ներկված է կարմիրով, ապա առկա է դրական կապ տողի և մարզի միջև, եթե կապույտով է ներկված, ապա առկա է բացասական կապ: Որքան մուգ է գույնը, այնքան ուժեղ է կապը:

Արագ արձագանքում ըստ մարզերի. 2015-2019 թթ.

Հարցվողները պատասխանել են այն հարցին, թե որքա՞ն արագ են ՏԻՄ-երը արձագանքում մաքրության պահպանման, տեղական վեճերի լուծման, օրենքի պահպանման, հարկերի հավաքագրման և այլ խնդիրներին: Արդյունքները ներկայացված են գծապատկեր 1-ում (առավել մանրամասն տես՝ Հավելված 1-ը):

Գծապատկեր 1. Խնդիրներին արձագանքելու արագությունը ըստ մարզերի և Երևան համայնքի. 2015-2019 թթ.



Համայնքների դեպքում, χ^2 մնացորդները հաշվարկվել են միայն 2019 թվականի համար և արդյունքները համախմբվել են Աղյուսակ 1-ում: «*»-ով առանձնացված համայնքները խոշորացված են:

Աղյուսակ 1. Խնդիրներին արձագանքելու արագությունը ըստ համայնքների

ՏԻՄ գործառույթների	Համայնքներ	
	Դրական կապ	Բացասական կապ
Համայնքի մաքրության պահպանում	Բերդ*, Գյումրի, Հարժիս*, Հրազդան, Ջերմուկ*	Իսահակյան*, Սպիտակ
Կրթության, մշակույթի, սպորտի բնագավառների կազմակերպությունների կառավարում	Այգաբաց*, Բյուրակն*, Գավառ, Գյումրի, Իսահակյան*, Հրազդան, Նոր Գեղի, Ստեփանավան*	Երևան, Լուսագյուղ
Ներհամայնքային ճանապարհների և կամուրջների պահպանում	Ավշար, Երևան, Լեհվազ*, Լուսագյուղ, Ծովագյուղ, Նոյեմբերյան*, Շամիրամ, Շենավան	Ախուրյան*, Արտավան*, Գավառ, Ստեփանավան*, Վաղարշապատ, Վարդենիս*
Առողջապահական հաստատությունների կառավարում	Երևան, Շենավան, Քարաշեն*	Արմավիր, Արտավան*, Եղեգնաձոր, Լեհվազ*, Ստեփանավան*
Առևտրի կետերի գործունեության կանոնակարգերի պահպանում	Եղվարդ*, Մեծամոր, Մասիս, Վաղարշապատ, Վեդի, Քասախ	Գավառ, Հարժիս*
Սննդի կետերում առողջապահական նորմերի ու չափորոշիչների պահպանում	Լեհվազ*, Մեծամոր, Նիզամի	Արտավան*, Լուսագյուղ
Տեղական վեճերի լուծվում	Լանջաղբյուր, Լուսաձոր, Մասիս, Մարգարա, Մեծ Պարնի, Շամիրամ	Գորիս*, Երևան
Ջրային ռեսուրսների և անտառների պահպանություն	Արևադաշտ, Արտավան*, Գորիս*, Լերմոնտովո, Հարժիս*, Սիսիան*, Ստեփանավան*	Աշտարակ, Ավշար, Երևան, Նիզամի, Շամիրամ
Օրենքի և օրինակարգի պահպանում	Արտավան*, Լուսաձոր, Վայք*, Վարդենիս*	Գյումրի, Գորիս*, Հարժիս*, Սիսիան*, Քարաշեն*
Տեղական հարկերի, տուրքերի, վճարների դրույքաչափերի սահմանում և գանձում	Արմավիր*, Գեղարոտ*, Գնիշիկ, Եղեգնաձոր, Լանջաղբյուր, Մարմարաշեն, Նիզամի, Նոր Կյանք, Ջերմուկ*, Փարաքար	Լճաշեն, Ծովագյուղ, Սիսիան*, Ստեփանավան*, Վարդենիս*

Թափանցիկություն ըստ մարզերի և Երևան համայնքի. 2015-2019 թթ.

Հարցվողները պատասխանել են հարցին, թե իրենց կարծիքով որքանո՞վ լավ կամ վատ են ՏԻՄ-երը կիրարկում հետևյալ ընթացակարգերը. օրինակ՝ համայնքի բյուջեի մասին իրազեկում, եկամուտների արդար բաշխում, գնումների կատարման թափանցիկություն, սոցիալական ծառայությունների մատուցում, զարգացման ծրագրերի վերաբերյալ իրազեկում և այլն: Գծապատկեր 2-ում ներկայացված են արդյունքները (առավել մանրամասն տես՝ Հավելված 2-ը):

Գծապատկեր 2. ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը ըստ մարզերի



Համայնքների դեպքում χ^2 մնացորդները հաշվարկվել են միայն 2019 թվականի համար և արդյունքները համախմբել են ստորև ներկայացված աղյուսակում ըստ խնդիրների (Աղյուսակ 2): Խոշորացված համայնքները առանձնացվել են «*»-ով:

Աղյուսակ 2. ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը ըստ համայնքների

Գործողություններ	Համայնքներ	
	Դրական կապ	Բացասական կապ
ՏԻՄ-երի գործունեության մասին համայնքի բնակիչների իրազեկում	Այրում*, Աշտարակ/Մուղնի, Ավշար,Արարատ,Արտավան*, Լերմոնտովո, Մեծամոր, Շենավան, Վեդի	Ստեփանավան*
Համայնքի բյուջեի մասին բնակիչների իրազեկում	Եղեգնաձոր, Ծովագյուղ, Վարդենիս*	Երևան
Տեղական որոշումների կայացման գործընթացի մեջ բնակիչների ներգրավում	Եղեգնաձոր, Իջևան, Լերմոնտովո	
Տեղական պաշտոնյաների դեմ բողոքների կառավարում	Իջևան, Ստեփանավան*	
Համայնքի եկամուտների արդար ու նպատակային օգտագործում	Սիսիան*, Ստեփանավան*	
Բնակիչների հետ խորհրդակցություն՝ հանրային ռեսուրսների գտագործման վերաբերյալ	Ազատան, Իսահակյան*, Սվերդլով*	
Գնումների կատարման թափանցիկություն, օրինակ՝ մրցույթների կազմակերպում:	Ախուրյան*, Այգաբաց*, Նորատուս	Ծովագյուղ
Սոցիալական ծառայությունների մատուցում	Արմավիր, Բյուրակն*, Հրազդան	
Իրազեկում զարգացման ծրագրերի վերաբերյալ	Գեղարոտ, Երևան, Մասիս, Վայք*	
Գույքի կառավարման թափանցիկություն, օրինակ՝ աճուրդների կազմակերպում:	Լանջաղբյուր, Նորատուս, Սարդարապատ	

ՏԻՄ-երի հետ խնդիրների լուծման միջոցները

Հարցվողները նաև պատասխանել են այն հարցին, թե համառությունը, համբերությունը, կապերը, կաշառքը, սոցիալական դիրքը, բախտը, արտաքին տեսքը, մասնագիտական որակները և տարիքը որքանո՞վ կարող են օգնել իրենց՝ լուծելու ՏԻՄ-երի հետ ծագած խնդիրները: Արդյունքները ներկայացված են Գծապատկեր 3-ում (առավել մանրամասն տես՝ Հավելված 3):

Գծապատկեր 3. ՏԻՄ-երի հետ խնդիրների լուծման մեխանիզմները ըստ մարզերի



Մարզերի իմիջի վերլուծություն

Նպատակ

Ստանալ մարզերի իմիջի քարտեզը և գնահատել, թե յուրաքանչյուր մարզ 2019 թվականին իմիջային ինչպիսի փոփոխության է ենթարկվել 2015 թվականի համեմատ:

Մեթոդ

Նպատակին հասնելու համար կիրառվել է համապատասխանությունների վերլուծության մեթոդը (Correspondence analysis), որը աշխատում է հաճախականությունների աղյուսակի հետ (crosstab): Այն որպես մեթոդ ստեղծված է տվյալների բազայի կառուցվածքը պատկերավոր տեսնելու և դրա հիման վրա հիպոթեզներ առաջ քաշելու համար: Մեթոդը ինքը ոչ մի հիպոթեզ չի հաստատում կամ ժխտում, այն պարզապես ցույց է տալիս մեծ աղյուսակի տեղեկատվությունը վիզուալ առավել հարմար և կոմպակտ ձևով: Այն պարզեցնում է նախնական մատրիցան՝ փորձելով հնարավորինս քիչ տվյալներ կորցնել դրա ընթացքում:

Այս հետազոտության շրջանակներում համապատասխանությունների վերլուծության մեթոդի օգնությամբ պարզեցվել է մատրիցան, որի սյուները իրենցից ներկայացնում էին մարզերը, իսկ տողերը ՏԻՄ-երի գոր-

ծառույթների և թափանցիկության կետերը: Աղյուսակի յուրաքանչյուր վանդակում այն հարցվողների քանակն էր, որոնք որպես հարցի պատասխան ընտրել էին 4 (լավ) կամ 5 (շատ լավ) տարբերակները (top 2): Մեթոդը տարածության մեջ դասավորում է աղյուսակի կետերը՝ ըստ միմյանց նմանության, և կոորդինատային առանցքները տեղադրում այնպես, որ առաջին առանցքը մոտ լինի ամենամեծ թվով կետերին, հետո ընտրում է 2-րդ առանցքը և այսպես մնացած բոլոր n-1 առանցքները (n-ը սյունակների թիվն է)՝ ըստ նվազման կարգի: Բոլոր առանցքները միասին բացատրում են ամբողջ տեղեկատվությունը՝ 100 տոկոսը, սակայն վիզուալացման համար սովորաբար ընտրվում է երկչափ տարածությունը՝ 2 առանցքով (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Կոորդինատային առանցքների բացատրող տեղեկատվության ծավալը

Eigenvalues	1	2	3	4	5	6	7	8	9	10
inertia %	**51%**	**20%**	10%	8%	3%	3%	2%	1%	1%	0%
cumulative %	**51%**	**72%**	82%	90%	93%	97%	98%	99%	100%	100%

Մեր դեպքում 2 առանցքը միասին բացատրում են տեղեկատվության 72 տոկոսը: Առանցքների ընտրությունից հետո մենք նայում ենք, թե աղյուսակի տողերի կետերից որո՞նք ո՞ր առանցքին են ամենից մոտ և ըստ այդ կետերի անվանում ենք առանցքները: Օրինակում առանցքները անվանվել են հետևյալ կերպ՝

- **X+ Կատարողական արագություն** (համայնքի մաքրության պահպանում, տեղական հարկերի, տուրքերի, վճարների դրույքաչափերի սահմանում և գանձում, տեղական ճանապարհների և կամուրջների պահպանում)
- **X- Թափանցիկ, արդար կառավարում** (օրենքի և կարգի պահպանում, տեղական պաշտոնյաների դեմ բողոքների կառավարում, տեղական վեճերի լուծում, սոցիալական ծառայությունների մատուցում, համայնքի բյուջեի մասին բնակիչների իրազեկում, ՏԻՄ-երի գործունեության մասին համայնքի բնակիչների իրազեկում, տեղական որոշումների կայացման գործընթացի մեջ բնակիչների ներգրավում, գնումների կատարման թափանցիկություն, օրինակ՝ մրցույթների կազմակերպում, համայնքի եկամուտների արդար ու նպատակային օգտագործում)
- **Y+ Ոլորտային զարգացած մենեջմենթ** (առևտրի կետերի գործունեության կանոնակարգերի պահպանում, վերահսկողության իրականացում, կրթության, մշակույթի, սպորտի բնագավառների կազմակերպությունների կառավարում, առողջապահական հաստատությունների կառավարում)
- **Y- Շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարություն** (ջրային

ռեսուրսների և անտառների պահպանություն):

Ավելորդ ծանրաբեռնվածությունից խուսափելու համար աղյուսակի տողերը կազմող կետերը հեռացվել են վերջնական քարտեզից. մնացել են միայն սյունակների մարզերը (Գծապատկեր 4): Այնուհետև անհրաժեշտ է նայել, թե մարզերը կոորդինատային առանցքներից որի՞ն են ավելի մոտ, ըստ այդմ մեկնաբանել, թե իմիջային ինչպիսի ընկալումներ ունեն մարդիկ այդ մարզերի մասին: Հարկ է նշել, որ որպես հաշվարկի հիմք ընտրվել է 2015 թվականը, իսկ 2019 թվականի մարզերի կետերը մեթոդում ավելացվել են որպես հավելյալ կետեր, այսինքն նրանք չեն ազդել կոորդինատային առանցքների դասավորության վրա: Պարզապես մեթոդը վերջում այդ կետերին ավելացրել է քարտեզի վրա, որպեսզի հնարավորություն լինի գնահատել, թե 2015 թվականին մարզի իմիջը ինչպիսի՞ն էր, իսկ 2019-ին՝ ինչպիսի՞ն:

Գծապատկեր 4. Մարզերի իմիջային ընկալման քարտեզ



Մեթոդի սահմանափակումները

Քանի որ առանցքներից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է մի քանի փոփոխականների միավորում, ապա յուրաքանչյուր մարզին վերագրելով որևէ իմիջային առանցք՝ պետք է հաշվի առնել, որ հնարավոր են դեպքեր, երբ այդ առանցքի ոչ բոլոր փոփոխականները բնութագրեն այդ մարզին: Սա պայմանավորված է նաև նրանով, որ ամբողջ տեղեկատվությունը բացատրելու համար անհրաժեշտ է 10 առանցք:

Հետհեղափոխական փոփոխություններ

Հետազոտական հարցեր.

- արդյո՞ք ՏԻՄ-երի աշխատանքի որակը 2019 թվականին 2015-ի համեմատ վիճակագրորեն նշանակալի կերպով փոփոխվել է,
- արդյո՞ք 2019 թվականին 2015-ի համեմատ ՏԻՄ-երի հետ խնդիրների լուծման տարբեր եղանակների ընդունելության աստիճանը վիճակագրորեն նշանակալի կերպով փոփոխվել է, և
- արդյո՞ք 2019 թվականին 2015 թվականի համեմատ տեղի են ունեցել վիճակագրորեն նշանակալի արժեքային փոփոխություններ:

Մեթոդ

Հետազոտական հարցերի պատասխանները ստանալու համար կիրառվել է T-տեստ երկու անկախ ընտրանքների համար (independent-samples t-test), որտեղ զրոյական հիպոթեզը միջինների հավասարության մասին է:

T-տեստի օգնությամբ ստուգվել է, թե արդյո՞ք փոփոխականների միջինների տարբերությունը նշանակալի է, թե ոչ: Այստեղ կարևոր է ոչ միայն ֆիքսել ցուցանիշների փոփոխության դինամիկան, այլ նաև գնահատել, թե ներկա դրությամբ որքանո՞վ է այն լավ կամ վատ ցուցանիշ:

Փոփոխություններ ինստիտուտների աշխատանքի որակում

Ընդհանուր ՏԻՄ-երի աշխատանքի որակի գնահատականներում բացասական դինամիկա է նկատվում համայնքի ղեկավարի արագ արձագանքման առումով, այնուամենայնիվ ցուցանիշը միջինին մոտ է: ՏԻՄ-երի աշխատանքից բավարարվածությունը ցույց է տալիս դրական դինամիկա, բայց դեռևս ցուցանիշը միջինից ցածր է: Իսկ մնացած բոլոր կետերում գոյություն ունի դրական դինամիկա և ցուցանիշները միջինից բարձր են (Գծապատկեր 5):

Գծապատկեր 5. ՏԻՄ-երի գործունեության որակային փոփոխություններ



ՏԻՄ-երի հետ խնդիրների լուծման եղանակները

Մյուս կետով փորձել ենք պարզել, թե ի՞նչը ըստ քաղաքացիների կարող է օգնել լուծելու ՏԻՄ-երի հետ խնդիրները (Գծապատկեր 6): Ըստ ստացված արդյունքների, համառությունը, համբերությունը, մասնագիտական որակները, տարիքը էլ ավելի են ընկալվում որպես խնդիրների լուծմանը օգնող հանգամանքներ: Կապերի և կաշառքի դեպքում առկա է ցուցանիշի նվազում, այսինքն մարդիկ 2019 թվականին էլ ավելի քիչ են մտածում, որ կաշառքը և կապերը կարող են օգնել իրենց լուծելու խնդիրները:

Գծապատկեր 6. ՏԻՄ-երի հետ խնդիրների լուծման ճանապարհների ընկալման փոփոխությունը



Իսկ նվեր տալու հաճախականությունը 2019 թվականին նվազել է, թեև նախկինում էլ ցուցանիշը ցածր էր, այնուամենայնիվ նվերներ տալու պրակտիկան էլ ավելի է նվազում (Գծապատկեր 7):

Գծապատկեր 7. Նվեր տալու հաճախականության փոփոխությունը



Արժեքային փոփոխություններ

Քաղաքացիներին հարց է տրվել, թե որքանո՞վ է կարևոր, որ քաղաքացին հետևի օրենքներին, աջակցի կառավարությանը, քվեարկի ընտրությունների ժամանակ, հետևի ավանդույթներին, կամավոր աշխատանք կատարի, աջակցի ավելի վատ գտնվող մարդկանց: Բոլոր կետերում ստացվել է միջինից բարձր ցուցանիշ (Գծապատկեր 8): 2019 թվականին մարդիկ ավելի շատ են կարծում, որ պետք է հետևել օրենքներին, աջակցել կառավարությանը, մասնակցել ընտրություններին: Նվազել է կամավոր աշխատանք կատարելու և ավելի վատ վիճակում գտնվող մարդկանց օգնելու ցանկությունը:

Գծապատկեր 8. T-թեստի արդյունքները արժեքային փոփոխականների համար



Հարցման մասնակիցներին խնդրել են նաև պատասխանել այն հարցին, թե որքանո՞վ է կարևոր, որ երիտասարդները, կանայք, խոցելի խմբերը, հաշմանդամություն ունեցող անձինք, փախստականները մասնակցեն ՏԻ-անը: Բոլոր կետերով առկա է դրական դինամիկա (Գծապատկեր 8):

Վստահության թիրախային խմբերի սահմանում

Հետազոտական հարցեր.

- պարզել, թե համայնքի ղեկավարներին ամենից շատ վստահող խմբերը ի՞նչ նկարագիր ունեն,
- պարզել, թե ավագանիներին ամենից շատ վստահող խմբերը ի՞նչ նկարագիր ունեն, և
- պարզել, թե վարչապետին ամենից շատ վստահող խմբերը ի՞նչ նկարագիր ունեն:

Մեթոդ

Հետազոտական հարցերին պատասխանելու համար կիրառվել է «Որոշման ծառերի» CHAID մեթոդը:

CHAID մեթոդը ծառը կառուցելիս հիմնվում է x2 արդյունքների վրա, և յուրաքանչյուր մակարդակում ծառը կառուցելիս ընտրում առավել ուժեղ կորելացվող փոփոխականը: Կախյալ փոփոխականը վերափոխել ենք դիխոտոմիկ փոփոխականի: Որպես անկախ փոփոխականներ վերցրել ենք ժողովրդագրական և համայնքի տիպին վերաբերող փոփոխականները:

Համայնքի ղեկավար

Ընդհանուր ընտրանքի մասշտաբով վստահությունը համայնքի ղեկավարի նկատմամբ 41 տոկոս է: Վստահության հետ ամենից ուժեղ կապված է մարզը:

Ծառի կառուցման արդյուքնում առանձնացվել են 3 թիրախային խումբ:

ա) Առաջին և ամենամեծ խումբը Արմավիրի, Սյունիքի, Արարատի և Վայոց Ձորի մարզերի բնակիչներից կազմված խումբն է, ովքեր ապրում են գյուղում և համայնքը խոշորացված չէ: Այստեղ վստահությունը համայնքի ղեկավարի նկատմամբ դառնում է 65 տոկոս:

բ) Եթե քաղաքացիները ապրում են Արմավիրի, Սյունիքի, Արարատի և Վայոց Ձորի մարզերում, և գումարը բավականեցնում է տեխնիկա և առավել թանկարժեք իրեր գնելուն, ապա այս խմբում վստահությունը համայնքի ղեկավարի նկատմամբ դառնում է 81 տոկոս:

գ) Երրորդ խումբը կազմված է Կոտայքի, Տավուշի, Լոռու մարզերի, ինչպես նաև Երևանի արական սեռի 47 տարեկանից բարձր բնակիչներից, ովքեր չունեն հագուստ և սնունդ գնելու խնդիր: Այս խմբում վստահությունը համայնքի ղեկավարի նկատմամբ 62 տոկոս է:

Փաստորեն մեթոդի միջոցով առանձնացվել են խմբեր, որտեղ համապատասխանաբար վստահությունը համայնքի ղեկավարի նկատմամբ բարձրացվել է 24, 40 և 21 տոկոսներով:

Համայնքի ավագանի

Վստահությունը ավագանու նկատմամբ ընտրանքի մասշտաբով արդեն իսկ բավականին բարձր էր՝ 67 տոկոս: Ծառի կառուցման արդյուքնում առանձնացվել են 3 թիրախային խումբ, ովքեր ամենից շատն են վստահում ավագանու անդամներին:

ա) Այս խումբը ունի բավականին պարզ կառուցվածք: Գեղարքունիքի մարզում ավագանու անդամներին վստահող ամենամեծ խումբն է հավաքված՝ 95 տոկոս:

բ) Երկրորդ խումբը Կոտայքի, Արմավիրի, Սյունիքի, Արարատի, Լոռվա, Վայոց Ձորի մարզերի բնակիչներն են, ովքեր ապրում են գյուղերում, չխոշորացված համայնքներում և հագուստ գնելու խնդիր չունեն: Այստեղ վստահությունը բարձրանում է մինչև 84 տոկոս:

գ) Երրորդ խումբը Տավուշի և Արագածոտնի մարզերի բնակիչներն են, ովքեր խնդիր չունեն հագուստ գնելու հետ: Այս խմբում վստահությունը 95 տոկոս է:

Վարչապետ

Վստահությունը վարչապետի նկատմամբ ընտրանքի մասշտաբով բավականին բարձր է՝ 72 տոկոս: Մեթոդի կիրառման արդյուքնում առանձնացվել են 3 թիրախային խումբ:

ա) Առաջին և ամենամեծ խումբը Տավուշի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու մարզերի բնակիչներն են, ովքեր ապրում են գյուղում, հագուստ գնելու հետ խնդիր չունեն և ապրում են չխոշորացված համայնքում: Այստեղ վստահությունը 89 տոկոս է:

բ) Հաջորդ խմբի բնակիչները ունեն նույն բնութագրիչները, միայն թե ապրում են խոշորացված համայնքներում: Այստեղ վստահությունը 95 տոկոս է:

գ) Երրորդ խումբը Տավուշի, Արարատի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի բնակիչներն են, ովքեր ապրում են քաղաքներում և 58 տարեկանից բարձր կանայք են: Այստեղ վստահությունը 94 տոկոս է:

ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՏԻՄ-ԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

Որքա՞ն արագ են ՏԻՄ-երը արձագանքում հետևյալ խնդիրներին.	Արագածո-տըն		Արարատ		Արմավիր		Գեղարք.		Լոռի		Կոտայք		Շիրակ		Սյունիք		Վայոց Ձոր		Տավուշ		Երևան	
	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019
Մաքրության պահպանումը	-1,7	-0,1	-0,7	-0,1	0,3	-0,5	-1,8	-0,7	0,7	-1,1	2,8	0,8	-2,7	-0,3	-0,3	1,5	0,3	2,0	1,3	0,9	1,8	-0,6
Կրթության, մշակույթի, սպորտի կազմ. կառավարումը	-0,3	-1,3	0,0	-1,1	2,4	-2,0	-1,4	1,2	0,9	0,2	3,1	1,7	-1,4	3,4	-0,3	1,2	-0,8	-2,1	-0,1	0,6	-1,5	-1,8
Ներհամայնքային ճանապարհների և կամուրջների պահպանումը	-0,4	2,2	-1,4	-0,7	-1,9	0,2	0,3	-1,1	-1,3	-2,1	0,1	0,0	-1,8	-1,7	0,0	0,7	0,8	-2,8	2,6	-1,0	2,7	4,1
Առողջապահական հաստատությունների կառավարումը	-0,1	-0,4	-0,8	-0,8	1,3	-1,0	0,6	1,0	-0,6	-1,5	1,8	-0,3	0,0	0,2	-0,2	0,8	0,4	-2,4	0,1	-0,6	-1,9	2,8
Առևտրի կետերի գործունեության կանոնակարգերի պահպանումը	0,4	-0,4	0,4	2,3	0,5	2,1	0,7	-1,4	0,2	-1,1	0,3	1,2	-0,2	0,5	-0,3	-0,9	-0,8	-1,9	-1,2	-1,4	-0,7	0,4
Սննդի կետերում առողջապահական նորմերի ու չափորոշիչների պահպանումը	0,0	-0,7	-0,9	1,2	1,3	0,7	1,2	-1,1	0,6	2,1	-1,5	-0,7	0,6	0,2	0,0	0,2	-0,3	-2,3	-0,2	-1,7	-0,7	0,5
Տեղական վեճերի լուծումը	-0,1	0,7	2,7	0,0	-0,3	-0,5	2,2	3,7	-0,9	1,5	-1,3	-1,3	0,9	1,3	0,1	-3,6	0,4	-2,2	1,9	1,7	-4,4	-2,5
Ջրային ռեսուրսների և անտառների պահպանությունը	-0,4	-2,3	-0,3	-1,8	-0,9	0,1	1,6	1,0	-0,2	1,7	-2,1	-0,2	1,5	-0,6	1,9	3,5	1,4	2,6	-0,4	-0,9	-1,4	-2,2
Օրենքի և օրինակարգի պահպանումը	0,5	1,2	1,0	0,0	-0,7	0,2	1,2	0,9	0,9	0,3	-0,6	-0,4	1,6	-1,6	-0,1	-3,0	0,2	2,9	0,0	1,0	-3,0	-0,5
Տեղական հարկերի, տուրքերի, վճարների գանձումը	2,0	1,5	0,3	1,2	-1,7	1,2	-2,4	-3,0	-0,4	0,5	-3,2	-1,5	2,2	-1,5	-0,3	-1,5	-1,1	4,5	-3,3	1,1	5,9	0,2

Թույլ դրական կապ
Միջին դրական կապ
Ուժեղ դրական կապ
Թույլ բացասական կապ
Միջին բացասական կապ
Ուժեղ բացասական կապ
90 % հավանականությամբ

ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՏԻՄ-ԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

Որքա՞ն լավ են ՏԻՄ-երը իրականացնում հետևյալ գործառույթները	Արագածոտն		Արարատ		Արմավիր		Գեղարք.		Լոռի		Կոտայք		Շիրակ		Սյունիք		Վայոց Ձոր		Տավուշ		Երևան	
	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019
ՏԻՄ-երի գործունեության իրազեկում	0,11	0,69	0,92	-0,15	0,45	1,31	-1,27	0,05	-0,41	-1,50	2,33	0,50	-0,28	-0,15	0,38	-1,31	1,49	1,18	-1,17	-0,67	-1,23	0,64
Համայնքի բյուջեի մասին իրազեկում	-0,20	-1,94	-0,57	-1,34	-0,54	-2,26	0,99	2,41	0,65	-0,05	-0,69	-0,32	-0,69	0,54	0,64	0,22	-1,11	0,80	-0,68	-0,01	1,09	0,59
Տեղական որոշումների կայացման մեջ բնակիչների ներգրավում	0,53	0,39	0,25	-1,01	0,28	-0,17	0,29	0,76	-0,90	0,76	2,13	0,72	-0,27	-1,04	-0,67	-0,33	-0,65	0,44	-0,92	1,37	-0,07	-1,80
Տեղական պաշտոնյաների դեմ բողոքների կառավարում	-0,67	0,52	-0,64	-1,07	0,40	0,04	-0,52	-0,92	-0,59	1,53	-1,15	-0,45	-1,07	-1,38	3,23	-1,10	-1,12	-0,50	-0,39	0,81	1,49	0,80
Համայնքի եկամուտների արդար ու նպատակային օգտագործում	0,58	1,37	-0,43	0,90	0,15	0,42	0,34	0,14	-0,24	-0,14	-0,45	0,27	0,53	-1,34	-0,26	-1,33	1,81	-0,01	-0,96	-0,16	0,12	-0,59
Բնակիչների հետ խորհրդակցություն՝ հանրային ռեսուրսների գտագործման վերաբերյալ	0,53	0,76	0,25	0,92	-0,12	-0,66	-0,48	-0,30	0,05	0,79	0,10	-0,56	-0,80	0,66	-0,67	1,22	0,08	-0,94	1,65	0,32	-0,07	-1,48
Մրցույթների կազմակերպման թափանցիկություն	-0,40	0,08	0,42	0,06	-0,55	0,68	0,01	-1,90	0,62	0,17	-1,58	0,72	2,14	2,61	-0,14	1,09	-1,26	0,44	-0,07	-0,87	-0,82	-0,20
Սոցիալական ծառայությունների մատուցում	-0,69	-0,64	-0,46	0,40	-0,23	-1,18	0,83	0,72	0,90	-0,44	-1,39	0,73	0,26	1,43	-1,68	-0,28	-0,19	-0,53	2,40	-0,06	0,11	0,16
Իրազեկում զարգացման ծրագրերի վերաբերյալ		-1,03		0,25		-0,48		-0,07		-0,51		-1,51		-1,23		1,19		0,15		0,07		1,93
Աճուրդների կազմակերպման թափանցիկություն		-0,61		0,62		2,08		-0,98		0,12		-0,34		-0,15		0,98		-1,38		-0,52		-0,11

Թույլ դրական կապ
Միջին դրական կապ
Ուժեղ դրական կապ
Թույլ բացասական կապ
Միջին բացասական կապ
Ուժեղ բացասական կապ
90 % հավանականությամբ

ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՏԻՄ-ԵՐԻ ՀԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

Հետևյալ կետերը որքանո՞վ կարող են օգնել քաղաքացիներին լուծել ՏԻՄ-երի հետ խնդիրները:	Արագածոտն		Արարատ		Արմավիր		Գեղարք.		Լոռի		Կոտայք		Շիրակ		Սյունիք		Վայոց Ձոր		Տավուշ		Երևան	
	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019	2015	2019
Համառություն	0,12	-1,28	-0,18	-0,21	-0,20	-0,13	-0,25	-0,51	1,00	2,06	0,25	-0,30	0,74	0,18	-0,73	1,32	-1,25	0,25	-1,25	-1,41	0,56	0,10
Համբերություն	1,72	1,24	0,84	-0,24	-0,07	-0,86	3,89	1,38	-2,08	2,45	-0,04	-1,25	-0,70	-0,05	0,26	1,89	0,75	0,82	-0,61	-0,91	-1,48	-1,83
Կապերի	-1,04	-1,06	-0,64	-0,22	0,85	0,04	-0,25	0,38	1,68	-0,21	0,73	0,39	-1,60	1,43	1,32	0,32	0,17	-1,17	-0,37	0,78	-0,53	-0,78
Կաշառք	-3,53	-2,04	-0,80	-0,94	2,41	-0,96	-1,93	1,47	-0,58	-2,06	2,00	-0,31	-1,35	0,20	-2,28	2,33	-0,61	-1,84	1,76	4,22	1,97	-0,33
Սոցիալական դիրք/պաշտոն	-1,58	-1,50	-0,77	-0,41	0,91	-0,59	-0,68	0,86	0,92	-0,60	0,83	0,05	-0,54	1,73	0,09	0,19	0,10	-1,45	-0,31	0,94	0,35	-0,09
Բախտ	2,35	1,28	1,01	0,50	-1,28	1,46	-1,38	-1,22	1,15	0,18	-2,11	-0,56	1,04	-1,25	0,40	-1,69	1,28	0,68	-2,16	-1,20	0,29	1,12
Արտաքին տեսք	1,57	0,04	0,66	0,38	-1,16	-0,67	-0,93	-0,81	-2,24	-1,75	-1,73	0,05	1,28	-1,29	-0,31	-1,23	-0,40	0,88	2,57	1,16	0,54	1,87
Մասնագիտական որակներ	1,02	2,28	0,22	-0,40	-1,72	0,72	1,61	-0,67	-0,38	0,43	-0,36	0,92	1,42	-0,70	0,95	-1,29	0,03	0,29	0,41	-1,48	-1,55	0,15
Տարիք		0,26		1,26		0,67		-0,43		-1,45		0,82		-0,33		-1,09		0,91		-0,40		-0,14

Թույլ դրական կապ
Միջին դրական կապ
Ուժեղ դրական կապ
Թույլ բացասական կապ
Միջին բացասական կապ
Ուժեղ բացասական կապ
90 % հավանականությամբ

ՀԱՎԵԼՎԱԾ. «ՀԱՄԱՏԵՂ» ԾՐԱԳՐԻ 2019Թ. ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

T1. Մարզի կոդը |___|___|

T2. Քլասթերի համարը |___|___|___|___|

T3. Տնային տնտեսության համարը
|___|___|___|

T4. Հրուցավարի *(Հվ)* համարը
|___|___|___|___|

T5. Խմբավարի համարը
|___|___|___|___|

Հարցազրույցի ամսաթիվը
|____|____|.|____|____|
(օր/ամիս)

Հարցազրույցի մեկնարկի ժամը
|____|____|:|____|____|
(ժամ/րոպե, 24-ժամյա ձևաչափ)

Հարցազրույցի ավարտի ժամը
|____|____|:|____|____|
(ժամ/րոպե, 24-ժամյա ձևաչափ)

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ.

ա) Եթե այլ նշում չկա, պատասխաններն արձանագրեք՝ օղակելով համապատասխան կոդը:

բ) **Եթե այլ հրահանգներ չկան**, օգտագործեք հետևյալ կոդերը՝

“1” “ԱՅՈ” պատասխանների համար

“0” “ՈՉ” պատասխանների համար

[հետևյալ տարբերակները չբարձրաձայնեք]՝

“-5” չի վերաբերում/կիրառելի չէ

“-9” չգիտեմ/դժվարանում եմ պատասխանել

“-8” պատասխան չկա/հրաժարվում է պատասխանել

ՆԱԽԱԲԱՆ

Հրուցավար՝ Ողջույն, իմ անունը [ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ] է: Ես ներկայացնում եմ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն–Հայաստան հիմնադրամը և տվյալներ եմ հավաքագրում «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ աջակցությամբ իրականացվող և տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների ներգրավմանն ուղղված ՀամԱՏեղ ծրագրի շրջանակում: Ձեր տնային տնտեսությունն, ի թիվս այլ 1500-ի, ընտրվել է մասնակցելու այս ուսումնասիրությանը, որը կնպաստի քաղաքացիների կարիքներն ու դիրքորոշումներն ավելի լավ հասկանալուն և նրանց առավել ակտիվ մասնակցությանը տեղական մակարդակով որոշումների կայացմանը: Ուսումնասիրության

արդյունքները կօգտագործվեն ՀաՄաՏեղ ծրագրի շրջանակներում՝ տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության ավելի լավ հնարավորություններ ընձեռելու համար նոր կառուցակարգեր և մոտեցումներ ձևավորելու նպատակով:

Ձեր տրամադրած տեղեկատվությունը կմնա գաղտնի, կօգտագործվի միայն ամփոփ ձևով և միայն հետազոտական նպատակներով: Այժմ եկեք անցնենք հարցազրույցին:

Այս հետազոտության շրջանակում մենք սահմանում ենք, որ տնային տնտեսությունը բաղկացած է մեկ կամ մի քանի անձից, ովքեր, սովորաբար, անկախ իրենց հաշվառումից և ազգակցական կապերից, ապրում են նույն տանը, ունեն համատեղ եկամուտներ ու ծախսեր, օգտվում են նույն խոհանոցից:

V1.	**Ասացեք խնդրեմ, ըստ տրված սահմանման՝ քանի՞ հոգի է ապրում Ձեր տնային տնտեսությունում (տ/տ)՝ <u>ներառյալ Ձեզ:</u>** [**<u>Ձվ.</u>** ԳՐԵՔ ԹԻՎԸ.]		ՄԱՐԴ
V2.	**Իսկ նրանցից քանի՞սն են չափահաս (18 տարեկան և բարձր):** [**<u>Ձվ.</u>** ԳՐԵՔ ԹԻՎԸ.]		ՄԱՐԴ

V3a	**Թվեք խնդրեմ Ձեր տ/տ բոլոր <u>չափահաս տղամարդկանց</u> տարիքը՝ սկսած տարիքով ամենամեծից:** **[Ձվ.** ԳՐԵՔ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐՆ **ԱՂՅՈՒՍԱԿ V3-ի** “ՍԵՌ” և “ՏԱՐԻՔ” ՍՅՈՒՆԵՐՈՒՄ: ՄԻ ՆՇԵՔ Տ/Տ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ:]	**ԱՂՅՈՒՍԱԿ V3** **№ | Սեռ | Տարիք | Տ/տ ընտրված անդամը** 1. 2. 3. 4. 5. 6.
V3b	**Այժմ թվեք խնդրեմ Ձեր տ/տ բոլոր <u>չափահաս կանանց</u> տարիքը՝ սկսած տարիքով ամենամեծից:** **[Ձվ.** ԳՐԵՔ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐՆ **ԱՂՅՈՒՍԱԿ V3-Ի** “ՍԵՌ” և “ՏԱՐԻՔ” ՍՅՈՒՆԵՐՈՒՄ: ՄԻ ՆՇԵՔ Տ/Տ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ: ԵԹԵ Տ/Տ-Ը ԲԱՂԿԱՑԱԾ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 6 ՉԱՓԱՀԱՍ ԱՆԴԱՄԻՑ, ԼՍԵՔ ՀԱՐՑՎՈՂԻՆ, ԲԱՅՑ **ԱՂՅՈՒՍԱԿ V3**-ՈՒՄ 6 ԱՆԴԱՄԻՑ ԱՎԵԼԻ <u>ՄԻ ԳՐԱՆՑԵՔ</u>:]	
	ՏՏ ՀԱՄԱՐԸ - ԱՐՏԱԳՐԵՔ ՎԵՐՋԻՆ 2 ԹԻՎԸ Т3-ից |____|____|	

[**<u>ՁՐՈՒՑԱՎԱՐ.</u>** ՍՏՈՐԵՎ ԲԵՐՎԱԾ <u>ԱՂՅՈՒՍԱԿ **V4**-Ի</u> ԽԱՉՎՈՂ ՎԱՆԴԱԿՈՒՄ ԳՏԵՔ ՀԱՐՑՎՈՂԻՆ՝ ՀԱՄԱԴՐԵԼՈՎ ՔԻՇԻ ԱՂՅՈՒՍԱԿԻ ԿՈԴԸ ԵՎ ԱՂՅՈՒՍԱԿ **V3**-ՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ Տ/Տ ՉԱՓԱՀԱՍ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ:]

[**ՀՐՈՒՑԱՎԱՐ.** ՔԻՉԻ ԱՂՅՈՒՍԱԿԻՑ ԳՏԵՔ S/S ՀԱՄԱՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԿՈԴԸ:]

ԱՂՅՈՒՍԱԿ V4

S/S ՀԱՄԱՐԸ	ԿՈԴԸ	S/S ՀԱՄԱՐԸ	ԿՈԴԸ	S/S ՀԱՄԱՐԸ	ԿՈԴԸ	S/S ՀԱՄԱՐԸ	ԿՈԴԸ
1	A	13	A	25	A	37	A
2	A	14	A	26	A	38	A
3	B1	15	B1	27	B1	39	B1
4	B2	16	B2	28	B2	40	B2
5	C	17	C	29	C	41	C
6	C	18	C	30	C	42	C
7	D	19	D	31	D	43	D
8	D	20	D	32	D	44	D
9	E1	21	E1	33	E1	45	E1
10	E2	22	E2	34	E2	46	E2
11	F	23	F	35	F	47	F
12	F	24	F	36	F	48	F

Կոդ	**Տնային տնտեսության անդամների թիվը** ***(V3** աղյուսակում գրանցված)*					
	1	**2**	**3**	**4**	**5**	**6 և ավելի**
	Ընտրեք տ/տ այն չափահաս անդամին, ում համարը Աղ. V3-ում հետևյալն է.					
A	1	1	1	1	1	1
B1	1	1	1	1	2	2
B2	1	1	1	2	2	2
C	1	1	2	2	3	3
D	1	2	2	3	4	4
E1	1	2	3	3	3	5
E2	1	2	3	4	5	5
F	1	2	3	4	5	6

[***Հվ.*** ՎԵՐԱԴԱՐՁԵՔ **V3** ԱՂՅՈՒՍԱԿԻՆ ԵՎ «S/S ԸՆՏՐՎԱԾ ԱՆԴԱՄԸ» ՍՅԱՆ ԱՅՆ ՏՈՂՈՒՄ, ՈՐՈՒՄ ՆՇՎԱԾ Է ԸՆՏՐՎԱԾ ԱՆԴԱՄԸ ԳՐԵՔ **"1"**, ԻՍԿ ԱՅԼ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՏՈՂԵՐՈՒՄ՝**"0"**: **ԸՆՏՐՎԱԾ ՀԱՐՑՎՈՂԻՆ ՏՎԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԸ**:]

D1. Իրազեկվածություն և գիտելիք

1.1. Ճանաչո՞ւմ եք արդյոք Ձեր համայնքի ղեկավարին: [0-*Ոչ,* 1-*Այո*] ***Կոդ՝***	

1.2.1. Ձեր համայնքի ավագանու անդամներից քանիսի՞ն եք ճանաչում: [0. *Ոչ մեկին ,* 1. *Մեկին*, 2. *Ոմանց*, 3. *Կեսին*, 4. *Գրեթե բոլորին*, 5. *Բոլորին*]	
1.2.1. Ձեր կարծիքով՝ կա՞ն ավագանու այնպիսի անդամներ, որոնք արժանի չեն իրենց պաշտոնին: [0-*Ոչ →* ***1.3.,*** 1- *Այո*]	

1.2.2. Ինչո՞ւ եք այդպես կարծում: *[**Զվ.** Ընդունեք և օղակեք մինչև 3 պատասխան]*

1	Պաշտոնը զբաղեցնում են անձնական շահադիտական նկատառումներով	
2	Հարգված չեն բնակիչների կողմից	
3	Երբեք համայնքապետին չեն հակադրվում, գործում են որպես նրա ստորադասներ	
4	Երբեք չեն հանդիպում բնակիչների հետ	
5	Համապատասխան կրթություն չունեն	
6	այլ (նշեք)	

1.3. Իսկ որքա՞ն է ավագանին անկախ համայնքապետից: [*(չբարձրաձայնել՝* -9. *Չգիտեմ),* 0. *Ամենևին,* 1. Շատ քիչ 2. *Որոշ չափով,* 3. Լիովին]	

1.4. Ձեր կարծիքով՝ ո՞վ/ովքե՞ր են կարող կասեցնել ավագանու անդամի մանդատը: [*Զվ. Ընդունեք և օղակեք բոլոր պատասխանները*]

0	Ոչ ոք	**4**	Մարզպետը		
1	Բնակիչները	**5**	Ազգային ժողովը		
2	Համայնքի ղեկավարը	**6**	Վարչապետը		
3	Ավագանին	**7**	այլ (նշեք)		

1.5.1. Ձեր համայնքի ղեկավարն ունի՞ իրեն կից խորհրդակցական մարմին(ներ): [***(չբարձրաձայնել՝*** -9. *Չգիտեմ)* **և** 0-*Ոչ →****1.6.,*** 1- *Այո*]	
1.5.2. Կցանկանա՞յիք ընդգրկվել դրանցից որևէ մեկում: [0-*Ոչ →****1.6.,*** 1- *Այո*]	
1.5.3. Նշեք խնդրեմ՝ որո՞ւմ:	

1.6.1. Գիտե՞ք արդյոք Ձեր համայնքի 2019 թվականի բյուջեի չափը: [0-*Ոչ →****1.6.3,*** 1- *Այո*]			
1.6.2. Նշեք, խնդրեմ մոտավոր թիվը		մլն դրամ	
1.6.3. Ձեր կարծիքով՝ առկա ֆինանսական միջոցները բավարա՞ր են ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորություններն արդյունավետ իրականացնելու համար: [0. *Ոչ*, 1.*Այո*]			

1.7.1. Գիտե՞ք արդյոք՝ ուր են ՏԻՄ-երն ուղղում համայնքի բյուջեի եկամուտները: [0-*Ոչ* → ***1.8.,*** 1-*Այո*]	
1.7.2. Նշեք խնդրեմ (1 կամ 2)	

1.8.1. Արդյոք տեղյա՞կ եք կառավարման ապակենտրոնացման մասին: [0-*Ոչ* →***1.9.,*** 1-*Այո*]	
1.8.2. Ըստ Ձեզ, ինչպիսի՞ ազդեցություն ունի այդ գործընթացը Ձեր համայնքի վրա: [0. *Ոչ մի*, 1. *Բացասական*, 2. *Դրական*]	

ՉԵՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՆ

1.9.1. Արդյոք տեղյա՞կ եք համայնքների խոշորացման գործընթացի մասին: [0-*Ոչ* →***1.10.,*** 1-*Այո*]	
1.9.2. Ձեր բնակավայրն արդեն խոշորացվե՞լ է: [0-*Ոչ* → ***1.9.5.,*** 1-*Այո*]	
1.9.3. Ընդհանուր առմամբ, խոշորացումն ինչպե՞ս է անդրադարձել Ձեր բնակավայրի վրա: [0. *Ո՛չ մի կերպ*, 1. *Շատ բացասաբար*, 2. *Բացասաբար*, 3.*Դրականորեն*, 4. *Շատ դրականորեն*]	
1.9.4. Ինչպե՞ս կանդրադառնան Հայաստանում վերջին քաղաքական փոփոխությունները Ձեր խոշորացված համայնքի վրա: [1. *Շատ բացասաբար*, 2. *Բացասաբար*, 0. *Ո՛չ մի կերպ*, 3.*Դրականորեն*, 4. *Շատ դրականորեն,* -9. Չգիտեմ/դժվարանում եմ պատասխանել]	
1.9.5. Ըստ Ձեզ, **խոշորացման** գործընթացն ինչպե՞ս կանդրադառնա Ձեր համայնքի վրա՝ **Հայաստանում վերջին քաղաքական փոփոխությունների լույսի ներքո**: [1. *Շատ բացասաբար*, 2. *Բացասաբար*, 0. *Ո՛չ մի կերպ*, 3.*Դրականորեն*, 4. *Շատ դրականորեն,* -9. Չգիտեմ/դժվարանում եմ պատասխանել]	
1.9.6 Ձեր համայնքին սպասվող խոշորացման հանդեպ ձեր վերաբերմունքը փոխվե՞լ է արդյոք վերջին քաղաքական զարգացումներից հետո: 1. Այո, դեպի դրականը 2. Ոչ, չի փոխվել 3. Այո, դեպի բացասականը -9. Չգիտեմ/դժվարանում եմ պատասխանել	

1.10. Ծանո՞թ եք արդյոք տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը կարգավորող որևէ օրենքի կամ կարգի: [0. *Ոչ*, 1. *Այո*]	

1.11. Եկեք քննարկենք Հայաստանում ՏԻՄ-ի լիազորությունների հետ կապված որոշ հարցերի վերաբերյալ Ձեր տեղեկացվածությունը:	[0-*Ոչ*, 1-*Այո*]
1. Ծանո՞թ եք արդյոք Ձեր ՏԻՄ-ի կողմից ընդունված որոշումներին:	
2. Երբևէ լսե՞լ եք որևէ հայտարարություն, որով Ձեր ՏԻՄ-ը հանրությանը հրավիրեին իրենց ընդունած կանոնակարգերի իրականացումը վերահսկելու նպատակով:	
3. Երբևէ վերահսկե՞լ եք Ձեր ՏԻՄ-ի ընդունած որևէ կանոնակարգի իրականացումը:	
4. Գիտե՞ք արդյոք կառավարության կողմից ՏԻՄ-ի գործունեության գնահատման որևէ գործիք:	
5. Գիտե՞ք թե ինչպես են ՏԻՄ-երը սահմանում տեղական հարկերի, տուրքերի, վճարների, տույժ-տուգանքների դրույքաչափերը:	

1.12.1. Արդյոք Ձեր համայնքը պարտքեր ունի՞: [-9.*Չգիտեմ* և 0-*Ոչ* →***1.13.,*** 1-*Այո*]					
1.12.2. Ինչպե՞ս եք դրա մասին տեղեկացել. *[Չվ. Ընդունեք և օղակեք բոլոր պատասխանները]*					
1.	ՏԻՄ-երից	**5.**	Տեղական հեռուստատեսությամբ		
2.	Հանրային հանդիպումներից	**6.**	Տեղական թերթերից		
3.	Տեղական ռադիոյով	**7.**	Համացանցից		
4.	Շրջապատից	**8.**	Այլ (նշեք)		

1.13 Որքա՞ն հաճախ եք օգտվում այս աղբյուրներից տեղական ինքնակառավարման մասին տեղեկություններ ստանալու համար:	1. Տեղական ռադիո	
	2. Հանրապետական ռադիո	
	3. Տեղական հեռուստատեսություն	
	4. Հանրապետական հեռուստատեսություն	
	5. Հայկական լրագրեր (տպագիր և առցանց)	
	6. Համացանցի ռեսուրսներ, սոցիալական ցանցեր	

1.17. Ձեր կարծիքով՝ ո՞ր լրատվամիջոցն է լավագույնս լուսաբանում ինքնակառավարման ոլորտը: *(Նշեք խնդրեմ լրատվամիջոցի անվանումը)*	

D2. Քաղաքացիական ակտիվություն

2.1. Ձեր համայնքի խնդիրների վերաբերյալ ավագանու որոշումների կայացման վրա որքանո՞վ է զգալի հետևյալ խմբերի ազդեցությունը: [0. *Ամենևին* 1. *Շատ քիչ* 2. *Որոշ չափով* 3. *Շատ*]	1. Կենտրոնական իշխանություն	
	2. Մարզային իշխանություն	
	3. Ազգային ժողովի պատգամավորներ	
	4. Երկրի նախագահ	
	5. Վարչապետ	
	5. Համայնքի ղեկավար	
	6. Ոչ-ֆորմալ առաջնորդներ (թաղային հեղինակություններ)	
	7. Համախոհների խմբեր	
	8. Տեղական ՀԿ-ներ	
	9. Միջազգային կազմակերպություններ	
	10. Մասնավոր ընկերություններ	

[*Զվ.* Յուրաքանչյուր տողում գրանցեք բոլոր հարցերի պատասխանները, այնուհետև անցեք հաջորդին:]

2.2. Վերջին 6 ամիսների ընթացքում կապվե՞լ եք հետևյալ անձանցից որևէ մեկի հետ անձնական կամ համայնքային խնդրի վերաբերյալ:

[***Զվ. Եթե*** 0.*Ոչ →**անցեք հաջորդին,*** 1.*Անձնական,* 2.*Համայնքային,* 3. *Անձնական և համայնքային*]

2.3. Գնացել եք մենա՞կ, թե՞ խմբով [1. *Մենակ,* 2. *Խմբով*]

2.4. Իսկ որքանո՞վ է հեշտ կամ դժվար նրանց առջև բարձրաձայնել Ձեր մտահոգությունը:

[1.*Շատ դժվար,* 2. *Դժվար,* 3. *Ոչ հեշտ, ոչ դժվար,* 4. *Հեշտ,* 5. *Շատ հեշտ*]

2.5. Իսկ որքա՞ն արագ են նրանք արձագանքում: [0. *Երբեք չեն պատասխանում*, 1 *Շատ դանդաղ,*
2. *Դանդաղ*, 3. *Ո՛չ արագ, ո՛չ դանդաղ*, 4. *Արագ*, 5. *Շատ արագ/անհապաղ*]

	2.2	**2.3**	**2.4**	**2.5**
1. Ձեր համայնքի ղեկավար				
2. Համայնքի Ձեր բնակավայրի վարչական ղեկավար				
3. Ձեր համայնքի ավագանու անդամ				
4. Տեղական իշխանության այլ պաշտոնյա				
5. Ազգային ժողովի Ձեր պատգամավոր				
6. Որևէ պետական հաստատության պաշտոնյա				
7. Որևէ կուսակցության պաշտոնյա				
8. Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ				
9. Բիզնեսի ներկայացուցիչ				

2.6. Այժմ կկարդամ խմբերի մի ցանկ: Նշեք խնդրեմ, արդյոք անդամակցո՞ւմ եք դրանց,

և եթե այո, ապա ի՞նչ կարգավիճակով: [0. *Անդամ չեմ*, 1. *Պասիվ անդամ*, 2. *Ակտիվ անդամ*, 3. *Ղեկավար*]	
1. Քաղաքական կուսակցություն կամ դրա տեղական մասնաճյուղ	
2. ՀԿ, համայնքային կազմակերպություն կամ ասոցիացիա	
3. Քաղաքացիական ակտիվիստների խումբ	
4. Կրոնական խումբ	
5. Այլ կամավորական միություն (օր.՝ երիտասարդական խումբ կամ բիզնես ասոցիացիա)	
(նշեք)	

2.7.1. Վերջին 6 ամիսների ընթացքում մասնակցե՞լ եք հետևյալ միջոցառումներին. [0-*Ոչ* → ***անցնել 2.7.4 հարցին***, 1-*Այո*] **2.7.2.** Որքա՞ն հաճախ: [1. *1 անգամ*, 2. *2 անգամ*, 3. *Ամեն ամիս*, 4. *Ամեն շաբաթ*, 5. *Միշտ]* **2.7.3.** Արդյոք դրանք արդյունավե՞տ էին: [0. *Ոչ*, 1. *Շատ քիչ*, 2. *Որոշ չափով*, 3. *Շատ*]	**2.7.1**	**2.7.2**	**2.7.3**
1. Համայնքի ավագանու նիստերի			
2. Համայնքի բյուջեի հանրային լսումների/քննարկումների			
3. Համայնքի քաղաքականությունների, ծրագրերի և պլանների հանրային քննարկումների			
4. ՀԿ-ների կազմակերպած համայնքային խնդիրների քննարկման կամ այլ հանդիպումների			
5. Բողոքի ցույցի կամ երթի			
6. Տեղական խնդրի վերաբերյալ ԶԼՄ հարցազրույցի կամ հաղորդման			

2.7.4. Հետևյալ ձևակերպումներից յուրաքանչյուրը որքանո՞վ է բնութագրում Ձեր ՏԻՄ-ի վերաբերմունքը նախորդ տարվա քաղաքական իրադարձություններին (1. Բնութագրում է լիովին, 2. Բնութագրում է մասամբ, 3. Ընդհանրապես չի բնութագրում, -9. Չգիտեմ/Դժվարանում եմ պատասխանել)

	1	**2**	**3**	**-9**
ՏԻՄ-ը ի սկզբանե աջակցում է քաղաքական փոփոխություններին				
ՏԻՄ-երը չեզոք էին				
ՏԻՄ-երն ի սկզբանե ընդդիմանում էին քաղաքական փոփոխություններին				
ՏԻՄ-երը միայն սկզբում էին ընդդիմանում քաղաքական փոփոխություններին				

2.8. [CB] Ձեր կարծիքով՝ որքանո՞վ է կարևոր, որ քաղաքացին. [0. *Ոչ կարևոր*, 1. *Քիչ կարևոր,* 2. *Կարևոր*, 3. *Շատ կարևոր*]	ա. Միշտ հետևի օրենքներին	
	բ. Աջակցի կառավարությանը բոլոր հարցերում	
	գ. Քվեարկի ընտրությունների ժամանակ	
	դ. Հետևի ավանդույթներին	
	ե. Կամավոր աշխատանք կատարի	
	զ. Աջակցի ավելի վատ վիճակում գտնվող մարդկանց	
	է. Քննադատի կենտրոնական իշխանությանը	
	ը. Քննադատի տեղական իշխանություններին	

2.9.1. Տեղյա՞կ եք քաղաքացիական կրթության որևէ դասընթացի մասին: [0-*Ոչ→**2.10.***, 1.*Այո*]	
2.9.2. Երբևէ մասնակցե՞լ եք նման դասընթացների [0.*Ոչ*, 1. *1 անգամ*, 2. *2 անգամ*, 3. *Բազմիցս*]	

2.10. Վերջին ընտրություններին քվեարկե՞լ եք՝ ընտրելու հետևյալ անձանց. [0. *Ոչ*, 1.*Այո →**2.10.2***]		**2.10.1.** Ինչո՞ւ չեք քվեարկել [1. *Տեղյակ չէի,* 2. *Որոշեցի չքվեարկել,* 3. *Ընտրացուցակում չկայի,* 4. *Չգտա ընտրատեղամասը,* 5. *Հաշվառված չէի,* 6. *Դեռ չափահաս չէի,* 7.*Խանգարել են քվեարկել,* 8. *Այլ (նշել)*]	**2.10.2.** [CB] Ըստ Ձեզ՝ ընդհանուր առմամբ արդար և թափանցիկ էի՞ն այդ ընտրությունները: [0.*Ոչ*, 1.*Ավելի շուտ ոչ*, 2.*Ավելի շուտ այո*, 3.*Այո*]	**2.10.3.** [CB] Կմասնակցե՞իք այդ ընտրություններին, եթե դրանք տեղի ունենային առաջիկա կիրակի: [0.*Ոչ*, 1.*Ավելի շուտ ոչ*, 2.*Ավելի շուտ այո*, 3.*Այո*]
1. Համայնքի ղեկավար				
2. Ավագանի				
3. Ազգային ժողովի պատգամավոր				

		11	**12**	**13**	**14**
2.11. Ձեր կարծիքով՝ այս խմբերը պե՞տք է լիարժեք մասնակցեն տեղական ինքնակառավարմանը: [0.*Ոչ*, 1.*Այո*]	1. Երիտասարդներ				
2.12. Իսկ նրանց մասնակցությունը լիարժե՞ք է: [0.*Ոչ*, 1.*Այո*]	2. Կանայք				
2.13. Իսկ նրանց լիարժեք մասնակցության	3. Հաշմանդամություն ունեցող մարդիկ				

համար առկա՞ են հնարավորություններ և պայմաններ: [0.*Ոչ*, 1.*Ավելի շուտ ոչ*, 2.*Ավելի շուտ այո*, 3.*Այո, -9. Չգիտեմ/Դժվարանում եմ պատասխանել, -8. Պատասխան չկա/Հրաժարվում է պատասխանել, -5. Չի վերաբերում/Կիրառելի չէ*] **2.14.** Ձեր կարծիքով՝ որքանո՞վ են հասարակական կազմակերպությունները ներկայացնում նրանց շահերը: [0.*Ամենևին*, 2.*Շատ քիչ* 3.*Որոշ չափով*, 3.*Շատ*, 4.*Լիովին, -9. Չգիտեմ/Դժվարանում եմ պատասխանել, -8. Պատասխան չկա/Հրաժարվում է պատասխանել, -5. Չի վերաբերում/Կիրառելի չէ*]]	4. Աղքատ, սոցիալապես խոցելի մարդիկ				
	5. Փախստականներ				

2.15.1. Ձեր համայնքում կա՞ն խնդիրներ՝ կապված շրջակա միջավայրի և բնակելի ու ոչ-բնակելի տարածքների պահպանության հետ: [0. *Ոչ →**2.16.,*** 1-*Այո*]	
2.15.2. Արդյոք ՏԻՄ-երը ինչ-որ քայլեր ձեռնարկո՞ւմ են այդ ուղղությամբ: [0. *Ոչ*, 1. *Այո*]	

2.16. Երբևե մասնակցե՞լ եք համայնքային ծառայությունների մատուցման վերահսկողությանը: [0. *Ոչ*, 1.*Այո*]	

2.17.1. Ձեր համայնքում, ըստ Ձեզ, առկա՞ են բավարար հնարավորություններ և պայմաններ՝ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու համար: [0. *Ոչ*, 1. *Այո*]	
2.17.2. Կարծում եք՝ Ձեր համայնքի անդամների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանն արդյունավե՞տ է: [0. *Ոչ*, 1. Շատ քիչ 2. *Որոշ չափով*, 3. *Շատ*]	

D3. Հաշվետվողականություն և վստահություն

3.1. Վերջին 6 ամիսների ընթացքում որքա՞ն հաճախ է համայնքի ղեկավարը հանդիպել իր ընտրազանգվածի հետ, որպեսզի. **3.2.** Իսկ ըստ Ձեզ՝ որքա՞ն հաճախ նա պետք է հանդիպի իր ընտրազանգվածի հետ, որպեսզի. [0.*Երբեք*, 1.*Տարին 1 անգամ*, 2.*Տարին 2 անգամ*, 3.*Ամեն եռամսյակ*, 4.*Ամեն ամիս*, 5.*Ամեն շաբաթ*]	**1**	**2**
1. Քննարկի և համաձայնության գա համայնքի զարգացման ծրագրերի շուրջ		
2. Տեղեկացնի ՏԻՄ-երի որոշումների մասին		

3. Քննարկի տեղական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված քայլերը		
4. Քննարկի և համաձայնության գա համայնքի բյուջեի շուրջ		

3.3. Որքա՞ն եք վստահում հետևյալ անձանց. [0. *Ամենևին*, 1. *Շատ քիչ*, 2. *Քիչ*, 3. *Ո՛չ շատ, ո՛չ քիչ*, 4. *Շատ*, 5. *Լիովին*] **3.4.** Ձեր կարծիքով՝ որքա՞ն հաճախ են նրանք լսում և հաշվի առնում մարդկանց կարծիքը: [0. *Երբեք*, 1. *Երբեմն*, 2. *Հաճախ*, 3. *Շատ հաճախ*, 4. *Միշտ*] **3.5.** Իսկ որքա՞ն է կարևոր, որ նրանք հաշվի առնեն մարդկանց կարծիքը: [0. *Ամենևին կարևոր չէ*, 2. *Քիչ կարևոր*, 3. *Կարևոր, 4. Շատ կարևոր*]	**3.3**	**3.4**	**3.5**
1. Համայնքի ղեկավար			
2. Ավագանու անդամ			
3. Ազգային ժողովի Ձեր պատգամավոր			
4. Երկրի նախագահ			
5. Վարչապետ			
6. Պետական այլ պաշտոնյաներ			
7. Քաղաքական գործիչներ			
8. Ոչ-ֆորմալ առաջնորդներ («թաղային հեղինակություններ»)			
9. Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ			
10. Սոցիալական ծառայություններ մատուցողներ			
11. Մարզպետ			
12. Բնակավայրի վարչական ղեկավար			

3.6. Որքանո՞վ են Ձեր ՏԻՄ-երը համագործակցում հետևյալների հետ. [0. *Երբեք*, 1. *Շատ քիչ*, 2. *Քիչ*, 3. *Ո՛չ շատ, ո՛չ քիչ*, 4. *Շատ*, 5. *Մշտապես, 9. Չգիտեմ/Դժվարանում եմ պատասխանել, -8. Պատասխան չկա/Հրաժարվում է պատասխանել, -5. Չի վերաբերում/Կիրառելի չէ*]]	1. Քաղաքացիներ, քաղաքացիական ակտիվ խմբեր	
	2. Համայնքում գործող քաղաքական կուսակցություններ	
	3. Հասարակական կազմակերպություններ	
	4. Ոչ-ֆորմալ առաջնորդներ (թաղային հեղինակություններ)	
	5. Մարզպետարան	
	6. Կենտրոնական իշխանություն	
	7. Լրատվամիջոցներ	
	8. Միջազգային կազմակերպություններ	
	9. Սոցիալական ծառայություններ մատուցողներ	

3.7. Տեղյա՞կ եք ՏԻՄ-երի հաշվետվողականության վերաբերյալ օրենքի մասին:	

[0. *Ոչ,* 1.*Այո*]	

3.8.1. Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կգնահատեք Ձեր ՏԻՄ-ի հաշվետվողականության մակարդակը: [1.*Շատ ցածր,* 2.*Ցածր,* 3.*Ո՛չ ցածր, ո՛չ բարձր,* 4.*Բարձր,* 5.*Շատ բարձր*]	
3.8.2. Ձեր կարծիքով՝ անցյալ տարվա համեմատ՝ այն աճե՞լ է, թե՞ նվազել: [0. *Ո՛չ նվազել է, ո՛չ աճել* , 1. *Նվազել է*, 2. *Աճել է*]	

3.9.1. Իսկ ինչպե՞ս կգնահատեք հասարական կազմակերպությունների հաշվետվողականության մակարդակը: [1.*Շատ ցածր*, 2.*Ցածր*, 3.*Ո՛չ ցածր, ո՛չ բարձր*, 4.*Բարձր*, 5.*Շատ բարձր*]	
3.9.2. Իսկ անցյալ տարվա համեմատ՝ այն աճե՞լ է, թե՞ նվազել: [0. *Ո՛չ նվազել է, ո՛չ աճել* , 1. *Նվազել է*, 2. *Աճել է*]	

D4. Թափանցիկություն

4.1. Որքա՞ն լավ կամ վատ են կիրարկում ՏԻՄ-երը հետևյալ ընթացակարգերը: [1. *Շատ վատ,* 2. *Վատ,* 3. *Ո՛չ լավ, ո՛չ վատ*, 4. *Լավ,* 5. *Շատ լավ*]	
ա. ՏԻՄ-երի գործունեության մասին համայնքի բնակիչների իրազեկում	
բ. Համայնքի բյուջեի մասին բնակիչների իրազեկում	
գ. Տեղական որոշումների կայացման գործընթացի մեջ բնակիչների ներգրավում	
ե. Տեղական պաշտոնյաների դեմ բողոքների կառավարում	
զ. Համայնքի եկամուտների արդար ու նպատակային օգտագործում	
է. Բնակիչների հետ խորհրդակցություն՝ հանրային ռեսուրսների (հողեր, անտառներ, շենքեր, ճանապարհներ, այգիներ, հուշարձաններ) օգտագործման, վարձակալության, վաճառքի վերաբերյալ	
ը. Գնումների կատարման թափանցիկություն, օրինակ՝ մրցույթների կազմակերպում:	
թ. Սոցիալական ծառայությունների մատուցում	
ժ. Իրազեկում զարգացման ծրագրերի վերաբերյալ	
ի. Գնումների կատարման թափանցիկություն, օրինակ՝ աճուրդների կազմակերպում:	

4.2.1. Ինչպե՞ս կգնահատեք ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը: [1. *Շատ ցածր*, 2. *Ցածր*, 3. *Ո՛չ բարձր, ո՛չ ցածր*, 4. *Բարձր*, 5. *Շատ բարձր*]	
4.2.2. Ձեր կարծիքով՝ անցյալ տարվա համեմատ՝ նրանց գործունեության թափանցիկության մակարդակն աճե՞լ է, թե՞ նվազել: [0. *Ո՛չ աճել է, ո՛չ նվազել,* 1. *Նվազել է*, 2. *Աճել է*]	

4.3.1. Ինչպե՞ս կգնահատեք հասարակական կազմակերպությունների գործունեության թափանցիկությունը: [1. *Շատ ցածր*, 2. *Ցածր*, 3. *Ո՛չ բարձր, ո՛չ*	

ցածր, 4. *Բարձր*, 5. *Շատ Բարձր*]	
4.3.2. Իսկ անցյալ տարվա համեմատ՝ նրանց գործունեության թափանցիկության մակարդակն աճե՞լ է, թե՞ նվազել: [0. *Ո՛չ աճել է, ո՛չ նվազել*, 1. *Նվազել է*, 2. *Աճել է*]	

D5. Արագ արձագանքում

5.1. Ձեր կարծիքով՝ ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում հետևյալ գործողությունները. [0. *Ամենևին*, 1. *Շատ վատ*, 2. *Վատ*, 3. *Ո՛չ լավ, ո՛չ վատ*, 4. *Լավ*, 5.*Շատ լավ*]	
1. Համայնքի մաքրության պահպանում	
2. Կրթության, մշակույթի, սպորտի բնագավառների կազմակերպությունների կառավարում	
3. Ներհամայնքային ճանապարհների և կամուրջների պահպանում	
4. Առողջապահական հաստատությունների կառավարում	
5. Առևտրի կետերի գործունեության կանոնակարգերի պահպանում	
6. Սննդի կետերում առողջապահական նորմերի ու չափորոշիչների պահպանում	
7. Տեղական վեճերի լուծում	
8. Ջրային ռեսուրսների և անտառների պահպանություն	
9. Օրենքի և օրինակարգի պահպանում	
10. Տեղական հարկերի, տուրքերի, վճարների դրույքաչափերի սահմանում և գանձում	

5.2. Ձեր կարծիքով՝ վերջին 6 ամիսների ընթացքում որքա՞ն հաճախ են Ձեր համայնքում բնակիչները ստիպված եղել նվեր մատուցել պաշտոնյաներից որևէ մեկին (գումարի, ապրանքի կամ լավության տեսքով)՝ հանրային ծառայություն ստանալու համար: [0.*Երբեք*, 1.*Հազվադեպ, 2.Հաճախ*, 3.*Մշտապես*]		
1.	Համայնքի ղեկավար	
2.	Ավագանու անդամ	
3.	Մարզպետ	
4.	Այլ պաշտոնյաներ	
5.	Սոցիալական ծառայություններ մատուցողներ	
6.	Համայնքի աշխատակազմ	
7.	Բնակավայրի վարչական ղեկավար	
8.	Մարզպետարանի աշխատակազմ	

5.3. [CB] Հետևյալ գործոնները որքանո՞վ կարող են օգնել քաղաքացիներին՝ լուծելու իրենց խնդիրները ՏԻՄ-երի միջոցով: [0. *Ամենևին*, 1. *Որոշ չափով*, 2. *Շատ*]				
1. Համառություն		6. Բախտ		
2. Համբերություն		7. Արտաքին տեսք		
3. Կապեր		8. Մասնագիտական որակներ		
4. Կաշառք		9. Տարիք		
5. Սոցիալական դիրք/պաշտոն		10. այլ (նշեք)		

5.4.1. Ձեր ՏԻՄ-երն ունե՞ն արդյոք հանրային կապերի (ՀԿ) բաժին/մասնագետ , բողոքների (ԲՀ) կամ էթիկայի (ԷՀ) հանձնաժողով՝ բավարարելու բնակիչների մտահոգությունները և բողոքները պաշտոնյաների վատ պահվածքի վերաբերյալ: [*1-Այո, 0-Ոչ: Ջ/Վ. Եթե բոլոր սյուներում պատասխանը* -9-Ձգիտեմ *և* 0-Ոչ *է→* ***5.8.***, 1-Այո *պատասխանի դեպքում տալ հաջորդ հարցը՝ նշելով համապատասխան սյունյակում]*	**ՀԿ**	**ԲՀ**	**ԷՀ**
5.4.2. Իսկ դիմել ե՞ք այդ հանձնաժողովներին: [0-*Ոչ*, 1-*Այո*, *Ջ/Վ. Եթե բոլոր սյուներում պատասխանը* **"Ոչ"** *է, →* ***5.8.****]*			

5.5. Այս պաշտոնյաներից որի՞/որո՞նց վատ պահվածքի վերաբերյալ եք բողոքել:		**5**	**6**	**7**
[Ջ/Վ. Համապատասխան վանդակներում նշել ***"1"*** *–եր և դրանց վերաբերյալ տալ հաջորդ հարցը]*	1. Համայնքի ղեկավար և աշխատակազմ			
5.6. Որքա՞ն արագ են Ձեր բողոք/ները արձագանք ստացել: *[Ջ/Վ.* ***Եթե*** 0.*Պատասխան չեմ ստացել, չեմ էլ ակնկալում* ***և*** 1.*Դեռ արձագանք չի եղել →* ***անցնել հաջորդին,***	2. Ավագանու անդամ			
	3. Մարզպետ			
2.*Շատ դանդաղ*, 3.*Դանդաղ*, 4.*Ո՛չ արագ, ո՛չ դանդաղ*, 5.*Արագ*, 6.*Շատ արագ/անհապաղ*]	4. Մարզպետարանի աշխատակազմ			
5.7. Որքանո՞վ եք բավարարված արձագանքից: [0.*Ամենևին*, 2.Շատ քիչ 3.*Որոշ չափով*, 3.*Շատ*, 4.*Լիովին*]	5. Այլ պաշտոնյա (հիվանդանոցի, դպրոցի, նախարարության և այլն)			
	6. Սոցիալական ծառայություններ մատուցողներ			

5.8. Ընդհանուր առմամբ՝ որքանո՞վ եք բավարարված ՏԻՄ-երի աշխատանքից:	

[0. *Ամենևին*, 2. Շատ քիչ 3. *Որոշ չափով*, 3. *Շատ*, 4. *Լիովին*]	
5.9. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր համայնքի աշխատակազմի մասնագիտական որակները: [1. *Շատ Ցածր*, 2. *Ցածր*, 3. *Ո՛չ բարձր, ո՛չ ցածր*, 4. *Բարձր*, 5. *Շատ բարձր*]	

D6. Տարածաշրջանային հարցեր

6.1. Ձեր կարծիքով՝ հարևան համայնքների բնակիչներն ավելի ակտի՞վ են մասնակցում տեղական ինքնակառավարման գործընթացներին: [1. *Ոչ*, 2. *Ավելի շուտ ոչ*, 3. *Ավելի շուտ այո*, 4.*Այո*]	

6.2.1. Տեղյա՞կ եք Ձեր և որևէ այլ համայնքի միջև որևէ համագործակցության մասին: [0-Ոչ→***6.3,*** 1-Այո]									
6.2.2. Ո՞ր ոլորտ(ներ)ում է Ձեր համայնքը համագործակցում մյուս(ներ)ի հետ: **[*Հվ. Օղակեք բոլորը*]**									
1	*Քաղաքական*	2	*Սոցիալական*	3	*Տնտեսական*	4	*Բնապահպանական*	5	*Այլ (նշեք)*

6.3.1. Տեղյա՞կ եք արդյոք միջազգային կազմակերպությունների կողմից Ձեր համայնքում իրականացվող զարգացման որևէ ծրագրի մասին: [0-Ոչ →***Q1,*** 1-Այո]	
6.3.2. Ինչպե՞ս կգնահատեք այդ ծրագր(եր)ի՝ Ձեր համայնքում հարուցած փոփոխությունը: [0. *Փոփոխություն չեմ տեսնում*, 1. *Բացասական*, 2. *Ոչ դրական, ոչ բացասական*, 3. *Դրական*]	

Q. Պատասխանողի սոցիալական և ժողովրդագրական տվյալները

Q1. Ո՞րն է մինչ այժմ Ձեր ստացած ամենաբարձր կրթական մակարդակը. 0. *Չեմ սրացել հիմնական կրթություն*, 1. *Հիմնական (լրիվ կամ ոչ լրիվ)* 2. *Թերի միջնակարգ*, 3. *Միջնակարգ*, 4. *Միջին մասնագիտական*, 5. *Թերի բարձրագույն*, 6. *Բարձրագույն*, 7. *Հետբուհական գիտական աստիճան*	

Q2. *[Հվ. Ցույց տվեք քարտը:]* Ներքոհիշյալից ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր ընտանիքի տնտեսական վիճակը: (Ընտանիքը այստեղ սահմանել որպես SS) 1. Ընտանիքի եկամուտը չի բավականացնում սնունդ գնելու համար: 2. Ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար: 3. Ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ և հագուստ, բայց ոչ թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա	

գնելու համար: 4. Ընտանիքի եկամուտը բավականացնում է թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար: 5. Ընտանիքի եկամուտը բավականացնում է ցանկացած բան գնելու համար:	

Q 3.1. Ներկայումս ունե՞ք (կամ ունեցե՞լ եք) որևէ հաշմանդամություն: [0. *Ոչ* → ***Q 3.3.***, 1. *Այո*]	
Q 3.2. Նշեք խնդրեմ հաշմանդամության կարգը [1-3]	
Q 3.3. Իսկ Ձեր ընտանիքի անդամներից որևէ մեկն ունի՞ հաշմանդամություն: [0. *Ոչ*, 1. *Այո*]	
Q 3.4. Նշեք խնդրեմ կարգը [1-3]	

crrc.am